2004

1203-ԿԿ

ՊԿՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՆՈՐԱՅԱՆԴԵՐՈՒՆ

ՔԱՆԻ ՄԸ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

ՅՕՐԻՆԵԱՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՐՈՒՍԱՑԻ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀԱՄՈՒՌՑԵԱՆՑ

ՀՐԱՄԱՆԱՒ ՏԵԱՌՆ ՄԱՏԹԷՈՍԻ

ԱՌԱՔԵԼԱՇԱՒԻՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

= 1845 =

286
2-19

286
2-19

4782-ա

(223-59)

35450-66

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ամէն քրիստոնէայ ազգ 'ի սկզբանէ մինչեւ հիմայ ուրիշ հաւատալիքներուն հետ սա խօսքիս ալ անսակարկայ կը հաւատան. թէ առանց մկրտութեան հոգւոյ փրկութիւն չըլլար։ Եւ մկրտութիւն ալ՝ ընդհանուր եկեղեցին Տեառն մերոյ Քրիստոսի և առաքելոց խօսքերէն տրված ըլլալով գիտէ որ մկրտելի անձին վրայ ջրով և ամենատուրբ Երրորդութեան կոչմամբ պիտի ըլլայ։ Ասանկ մկրտված անձը կըլլայ Եկեղեցւոյ անդամ. այսինքն՝ Քրիստոսի մարմնոյն անդամ. և մինչեւ որ մէկ մարդ մը Քրիստոսի անդամ չըլլայ նէ՝ երկնից արքայութիւնը ժառանգ չի կրնար ըլլալ։

Նորաղանդները՝ որ իրենց վարդապետութիւնները իրենց աշակերտացը մէկէն 'ի մէկ չեն տրվեցրներ, կարգաւ իրարմէ հեռուցրնելով մէկիկ մէկիկ կըտրվեցրնեն, այս օրերը Իշխիր տրված տետրակներնուն մէկուն մէջը մկրտուելու վրայ ընդհանուր եկեղեցւոյ գիտցածին հակառակ բան մը հրատարակեցին. մենք ալ այս տետրակս այն բանը պիտի քննենք։

Եւ զպպէս զի այս տուրբ խորհրդոյս վրայ պէտք եղած տեղեկութիւնները տուած ըլլանք, տետրակը այս կարգիս վրայ կը շարադրենք։

1. Մկրտութիւնը ի՞նչ է։ Եւ պզտիկ տղոց ալ հարկաւո՞ր է մի։ Եւ ինչո՞ւ համար։

2. Քրիստոնէի տղոց հարկաւոր չէ՞, և չափահաս մարդոց անդամ հաւատալէն ետքը մկրտվիլը այնքան հարկաւոր չէ՞ ըսողները ո՞վ են։

3. Մկրտութիւնը թրիստոսութեան տեղ տրված չէ՞։

Այս տուրբ խորհրդոյս մատակարարութեանը վրայ քրիստոնէից այլևայլ ազգերը իրարմէ տարբեր տարրողութիւններ ունին. սակայն եկեղեցին անոնք առէն ալ ընդունած է. միայն՝ խորհրդոյն էապէս հարկաւոր եղած բաները կուզվին, որ են տուրբ Երրորդութեան անունամբ և ջրով մկրտելը. մէկալները հանդիսի վերաբերեալ բաներ

11343

էն։ Հերետիկոսներուն անգամ բրած մկրտութիւնը օրինաւոր կը սեպէ Նիկիոյ սուրբ Ժողովքը, երբ որ ուրեմ բորդ կանոնին մէջ՝ Նովատեան հերետիկոսներուն համար կ'ըսէ որ՝ թէ որ եկեղեցի դառնան, և եկեղեցւոյ ամբողջ դաւանութիւնը անեղծ պահեցու՝ և երկու անգամ կարգը. վածները՝ և հաստատման ատենը հաւատքին ուրանալէն ետքը զղջացողները եկեղեցիէն դուրս չի սեպէցու համար հաստատուն խոստմունքով գիր տան նէ, զանոնին ձեռք դրմամբ եկեղեցւոյ մէջ ընդունելին. և եպիսկոպոս ձեռնադրմածները անգամ եպիսկոպոսական պատուոյն կ'ընդունի նոյն Ժողովքը, նորէն ձեռնադրութիւ կարգ տալը հարկ չի սեպելով։ Արիոսականներուն մկրտութիւնը անգամ նոյն Նիկիոյ Ժողովքը, և անկէց ետքն ալ երկար ատեն ընդունելի սեպվեցաւ. ինչպէս որ սուրբն Եպիփանոս կը վկայէ ընդդէմ Լուկիփերեանց գրքին մէջ։ Քանզի թէպէտ Արիոս իր հերետիկոսութիւնովը Եկեղեցութեան հաւատքը կը ջնջէր. բայց մկրտութեան խորհրդոյն մատակարարութեան ատենը բան խօսքը մոլորական չէր։ Ասոր վրայ Թէոդորետոս եկեղեցական պատմութեան մէջ (Գր. գ. Գլ. 1.) կ'ըսէ. "Մկրտութեան խօսքին մէջն ալ Եկեղեցութեան "կոչումը փոխել կուզէր. բայց մրքան յանդուգն ալ էր նէ՝ "աւետարանին յայտնի խօսքին դէմ կենալու չափ համար "ձակութիւն չի կրցաւ ունենալ"։ Բայց ետքը Եւնոմիանները՝ որ Արիոսականներուն մէկ ճիւղն էին, այս բանիս վրայ Արիոսին չի համաձայնածը ըրին. և անկէց ետքը Արիոսականներուն ըրած մկրտութիւնը նորոգելու եղաւ։ Կոստանդնուպօլսոյ տիեզերական Ժողովքն ալ՝ որ 381 թուին եղաւ, Սաբէլեաններուն և Մակեդոնեաններուն ըրած մկրտութիւնը չընդունիր եօթներորդ կանոնին մէջ։ Եւ սուրբն Օգոստինոս կը վկայէ ընդդէմ հերձուածոց գրքին մէջ, (Հէրէզոսց. խդ.) թէ եկեղեցին Պօղոս Սամոսատցիին հետեւողներուն մկրտութիւնն ալ չէր ընդունէր. և ասկէց կը մակաբերէ որ՝ մկրտութեան խօսքին մէջ փոփոխութիւն մը մտցուցած պիտի ըլլան։ Ըսել է որ՝ մկրտութեան ձեւոյն մէջ փոփոխութիւն մը չըլլայ, և նիւթը ջուր ըլլայ նէ՝ սրարողութիւնը չի նայիր. սր սրարողութիւնով ըլլայ նէ ըլլայ, ընդունելի է։ Ուստի՝ սրարողութեանց վրայ խօսիլ պէտք չըլլալով միայն հարկաւորութեանը վերաբերեալ բան ներուն վրայ կը խօսիմք այս տետրակիս մէջ։

ԳԼՈՒԽ Ա.

Մկրտութիւնը ի՞նչ է. և պտղոց ապ հարկաւո՞ր է մի. և ինչո՞ւ համար։

1. ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆ է եկեղեցւոյ խորհուրդն ներքուն առաջինը. որով տակաւին եկեղեցիէն դուրս գտնըվող անձ մը, ամենասուրբ Երրորդութեան անուանը կոչմամբ ջրով լուացվելով՝ հոգին մեղքէ կը մաքրըվի. և եկեղեցւոյ անդամ՝ և Աստուածային շնորհաց ընդունակ կըլլայ։

Այս խորհրդոյս սահմանադիրը Յիսուս Քրիստոս՝ իր սուրբ աւետարանին մէջ ըսած այլևայլ խօսքերովը մկրտութեան վերայ այս բաներս կը սորվեցընէ։ "Երթէ ոչ "ոք ծնցի՝ ի ջրոյ և՝ ի հոգւոյ՝ ոչ կարէ մը"տանել յարքայութիւն Աստուծոյ" (Յովհ. գ. 5)։ "Որ հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ" (Մարկ. ժզ. 15)։ "Գնացէք այսուհետեւ՝ "աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մը"կըրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ "և Հոգւոյն սրբոյ" (Մատթ. իը. 19)։

Առաքեալներն ալ Քրիստոսի ըսածը կը կատարէին։ Հոգեգալստեան օրը լեզուաց սքանչելիքը տեսնողները Պետրոս առաքելոյն

քարոզութիւնը լսելով զղջացան, և ի՞նչ ը-
նեմք ըսելով Պետրոսի և ուրիշ առաքելոց
վրայ գացին նէ՝ Պետրոս անոնց այս պատաս-
խանս տուաւ. «Ապաշաւեցէք. և մկրտեա-
„ցի՛ իւրաքանչիւր որ ՚ի ձէնջ յանուն տեա-
„ռն Յիսուսի Քրիստոսի ՚ի թողութիւն
„մեղաց „ (Գործ. բ. 38)։ Փիլիպպոսի քա-
րոզութեանը հաւատացողները Սամարիայի
մէջ՝ երիկ մարդ կնիկ մարդ կը մկրտվէին.
և Սիմոն մոգը անդամ հաւատաց և մկրտը-
վեցաւ (Գործ. ը. 12. 13.)։ Նոյն փիլիպպոս՝
Կանդակայ տիկնոջ ներքինին Քրիստոսա-
կան հաւատքը քարոզած ատենը ՚ի հարկէ
մկրտութեան հարկաւորութիւնն ալ հաս-
կցուցած պիտի ըլլայ. որ երբ որ ջուրի
մը քով եկան նէ՝ ահա՛ ջուր, ըսաւ, ալ մկ-
տվելուս ի՞նչ արգելք կայ։ Այս փիլիպպոս
և ներքինին երկուքն ալ ջուրը ինջան. և հոն
ներքինին մկրտվեցաւ։ (Գործ. 36=38)։
Զըսաւ որ՝ հաւատալդ պէտք է. մկրտելու
հարկ մը չէ կայ. չի մկրտված ալ կրնաս ըլլալ։
Պօղոս առաքեալը Դամասկոս երթալու ճամ-
բան հրաշալի կերպով դարձի գալէն ետքը
երբ որ Դամասկոս մտաւ, Անանիա եկաւ
ձեռքը վրան դնելով աչքին կուրութիւնը
բժշկեց. Պօղոս ալ ելաւ մկրտվեցաւ (Գործ
թ. 18)։ Կուռնէլիոսի հրաշալի մկրտութիւ-
նն ալ յայտնի է. որ Հոգին սուրբը վրան
ինջնալը յայտնի կերպով տեսնվելէն ետքն
ալ հրամայեց Պետրոս որ մկրտվին. (Գործ.

Ժ. 44. 47. 48)։ Հոգւոյն սրբոյ ինքնալը մը-
կրտութեան տեղ չէր բռներ. մանաւանդ՝
մկրտութիւնը տալու ուրիշ մէկ պատճառ
մըն ալ տսիկայ եղաւ. «Մինթէ զքուրն ոք
» արգելուլ կարէ՝ ըստ պետրոս, առ 'ի չը-
» մրկրտելոյ զսոսա. որք և զՀոգին սուրբ
» ընկալան որպէս և մեք »։ Թիւատիր քա-
ղաքը Լիդիա անուն ծիրանավաճառ կնոջը
սիրտը նոյն իսկ Աստուած բացաւ՝ որ Պօ-
ղոսի բսածներուն հաւատայ. ասկէց ալ
յայտնի խօսք չըլլար այն կնոջը հաւատքը
կատարեալ ըլլալը հասկրցընելու. բայց ա-
նիկայ ալ մկրտըվեցաւ (Գործ. ԺԶ. 14. 15)։
Բանտապետը երբոր հաւատաց՝ կէս գիշեր
առեն շուտ մը բանտին դրանը քով մկրտը-
վեցաւ. ուրիշ քրիստոնեայ ալ չի կար հոն.
որ անոնց քովը մկրտըվելուը նշան ըլլայ որ
այն բանտապետն ալ քրիստոնէից կարգը
առնըվեցաւ (Գործ. 32. 33)։

Յայտնի բանի վրայ այսքան եր կընցընե-
լուն ալ աւելի է. առաջին դարուց հայրա-
պետներէն վկայութիւն փնտրուելալ պէտք
չէ. քանզի մարդ չըսեր որ սուրբ գրոց մէջ
այսքան յայտնի եղած բանը հաստատելու
համար հայրապետաց վկայութիւն պէտք է։
Այս վկայութիւններս այն ատենը պէտք
կ'ըլլան, երբոր սուրբ գրոց խօսքը երկդիմի
կը հասկրցվի կամ մութ կ'ըլլայ. քանզի այն
ատենը հարկ կ'ըլլայ սորվիլ որ 'ի սկզբանէ
անտի Աստուծոյ եկեղեցին այն բանը ի՞նչ-

պէս հասկցողը է. որպէս զի մենք տարբեր կերպով հաւատալով եկեղեցւոյ մէջ այլ և այլ հաւատք և նորութիւն չի մոցընենք. և հարկ ջրլայ ամբարտաւանութեան մէջ ինկալ. ըսելով թէ այս խօսքիս միտքը շի տակ հասկրցող մինակ ես գտնըվեցայ. թէ՛ հին ժամանակի հայրապետները և թէ՛ հիմակվան իմաստուն աստուածաբանները ինձի չափ իմաստութիւն չունեցան որ այս բանս շիտակ հասկընային։

2. Որովհետեւ Քրիստոսի խօսքը յայտնի էր, որ մինչեւ որ մէկ մարդ մը չի մկրտվի նէ աբքայութիւն չի կրնար մտնել, հաւատացեալները մկրտութեան խորհրդոյն սկզբնաւորած ատենէն, այսինքն՝ Քրիստոսի և առաքելոց ատենէն մինչեւ հիմա շարունակ սովորութիւն ունին մանր տղայքն ալ մկրտելու։ Քրիստոսի 252 թուին՝ Փիդոս անուն եպիսկոպոս մը սուրբ Կիպրիանոս հայրապետին նամակ մը գրելով՝ իրեն քանի մը տարակոյսներուն պատասխան ուղեց։ Կը կարծէր որ՝ ինչպէս որ հին օրինաց մէջ մէկ տղայ մը ութօրվան ըլլար նէ կը թլփատվէր, նմանապէս տղայ մը մկրտելու համար ալ սպասելու է որ տղայն ութ օրվան ըլլայ։ Այսիկայ իրեն մէկ մանաւոր մտածութիւնը և կարծիքն ըլլալով՝ 'ի գործ դնելու չի համարձակեցուն համար անանկ մէկ սուրբ և իմաստուն հայրապետի մը կառաջարկէր։ Նոյն տարւոյն մայիսի 15 ին Կարթագինէ քա-

ղաքը ժողովք ըլլալով՝ այս գիրս այն ժողովոյն հայրապետներուն առաջարկվեցաւ։ Եպիսկոպոսներուն մէջէն մէկն ալ չեղաւ որ ասոր ըսածին հաւանութիւն տայ. ամէնը միաբան վճռեցին որ՝ Աստուածային ողորմութենէն մանր տղայքը զրկել չըլլար։ Թէ որ այս սովորութիւնս՝ որ է մանր տղայք մկրտելը, այն առենը հին եղած չըլլար նէ՝ եպիսկոպոսներուն մէջը մէկ տարաձայնութիւն մը հարկաւ կ'ըլլար, ինչպէս որ ամէն նորելուք բաներու վրայ կ'ըլլայ. մէկը կերպ մը կը խօսի՝ մէկը ուրիշ կերպ մը։ Ու ժողովոյն ժամանակն ալ անանկ է որ՝ քիչ մըն ալ հեռացընենք նէ առաքելոց առենը կը տանիմք։

Դիոնեսիոս Արիսպագացիին խօսքերէն հոս վկայութիւն առնել չեմ ուզեր. քանզի ասոր անունով գտնըված գիրքերուն վրան վէճ կայ՝ թէ անորը չեն. թէպէտ շատ ի մատուն մարդիկ ալ անորն է կ'ըսեն. և Որոգինէսի (որ Բրիտոսի 253 թուին մեռաւ), և սրբոյն Աթանասի և սուրբ Ասկեբեռանի և սուրբ Գրիգոր աստուածաբանի և սուրբ Կիւրեղ Աղեքսանդրացւոյ գիրքերուն մէջը այս գիրքերէս վկայութիւն կայ. բայց գիրքերը Արիսպագացիին չէ ըսողները՝ այսքան մարդոց գրքերուն մէջն ալ ասոր անունը եղէն մնած է. բուն հեղինակներուանը չէ կ'ըսեն. և եղբը կը դառնան կ'ըսեն որ՝ թէ որ այս գիրքերս Արիս-

պապ ացիինը ըլլայն նէ՝ հին հայրապետնե-
րէն յիշող՝ և ասկէց վկայութիւն առնող
'ի հարկէ կը դանըվեր։ Այլ վրայ երկար
խօսք ընել չուզելով՝ Արիսպագացիին դիր-
քերէն առնըված վկայութիւնները մէկ դի
կը ձգեմք։

Սբ Օգոստինոս որ Աֆրեոսոսի տիեզերա-
կան ժողովքէն տարի մը առաջ մեռաւ 430
թուին, առաքելական բանից վրայ խօսած
չորեքտասաններրորդ ճառին մէջ. (Գալ. ա.
Ի–, 12), կըսէ. "Տղայքը մկրտելու ըլլա-
„լուն վրայ խնդիր յարուցանել պէտք չէ։
„Ասիկայ շատ ատենէ 'ի վեր հաստատած վար-
„դապետութիւն մըն է. որ կաթուղիկէ ե-
„կեղեցւոյ մէջ գերապոյն հեղինակութիւն
„հաստատուած է։ Աֆրեղեցւոյթը-
„նամիները (Պելագեան հերետիկոսները)
„անդամ այս բանիս վրայ մեղի հետ միաբան
„են. ասոր վրայ ամենեւին խնդիր և տարա-
„կոյս չի կայ"։ Նոյն ճառին 17 և 21 գլուխ-
ներուն մէջ ալ նոյնպէս և աւելի ազդու-
խօսքերով կը խօսի։

Կարթագինոյ ժողովքը 397 թուին, որ
յունաց եկեղեցւոյ ալ ընդունած ժողովք-
ներուն մէկը ըլլալով Իսպանիոն գրքին մէջը
ասոր կանոնէրն ալ դրված է, երկրորդ կա-
նոնին ասանկ կը խօսի. "Ով որ կըսէ թէ
„նոր ծնած պզտիկ տղայքը մկրտել պէտք
„չէ, կամ թէ մեղաց թողութեան համար մը-
„կըրտըվելու չեն, և Ադամէն սկզբնական

„մեղք մը անցած չէ՝ որ անիկայ քաւելու և „սրբելու համար մկրտել հարկ ըլլայ. և աչ „կէց կը հեռուի որ՝ անոնց մեղքերուն թո „ղուլթիւն գտնելու համար մկրտվիլը սուտ „եղած կ'ըլլայ։ Ասանկ բոլորը նզովեալ ըլլայ „։

3. Յոզովքին այս կանոնը՝ պզտիկ տղայ մը կրտուլթեան պատճառը ինչ ըլլալն ալ կիմացընէ. որ է՝ Ադամէն անոնց անցած սկզբնական մեղայ թողուլթիւն գտնելը։ Արիկայ նոյն Կարթագինոյ ժողովքը յայտնի կըսէ. "Տղայքը մկրտել պէտք է սկզբնական մեղքէն մաքրելու համար. որպէս զի՝ ծնանելով ունեցած մեղքերնին՝ վերստին ծնանելով մաքրըվի „։ Այս հաւատոյս հիմը Պօղոս առաքելոյն գրածէն կառնըվի. որ պէտք է այս տեղս դնել։ Սուրբ առաքեալը հռոմայեցիներուն գրած նամակին հինգերորդ գլուխը ըսելով՝ որ մեր մեղայ մէջ եղած ատենը Քրիստոս մեզի համար մեռաւ նէ՝ հիմա անոր արիւնովը արդարանալուինս և առաւել անոր բարկութենէն կազատիմք։ Այս տեղ կը հաստատէ այն ճշմարտութիւնը՝ որ ամէն ուղղափառ քրիստոնեայներ կը հաւատան թէ մեզ արդարացընողը Քրիստոսի արիւնն է, և այն որ չըլլայ նէ՝ մեր բարեգործութիւնները բոտակ մը չեն ըներ. այլ մեր բարի գործքը Քրիստոսի արդեանցը հետ միացընելով՝ այն արդարութիւնը մեր կ'ընեմք։ Որ համար է որ "Պարծիմք և ի նեղութիւնս մեր „ (Հռոմ.

է. 3). քանզի յոյս ունիմք որ՝ մեր Աստուծոյ հետ թշնամի եղած ատենը Որդւոյն աստուծոյ մահուամբը հետը հաշտուեցանք նէ՝ հաշտած ատենիս եւս առաւել կապրիմք անոր կեանքովը։ Այս բանէն պատճառ առնելով՝ Քրիստոսի և Ադամայ մէջ մէկ բաղդատութիւն մը կը հանէ. ըսել է որ՝ ինչպէս որ Քրիստոսի արդարութիւնը մեզի կը սեպվի կոր, և անով կարդարանամք կոր նէ՝ Ադամայ ալ մեղքը մեզի կը սեպվի. և անով մեղաւոր կ'ըլլամք։ "Որպէս միոյն „յանցանօք յամենայն մարդիկ դատապար„տութիւն, նոյնպէս և միոյն արդարու„թեամբն յամենայն մարդիկ արդարու„թիւն կենաց" (Հռ. 18)։

Այս նմանութիւնս ալէկ միտք առնելու է։ Քրիստոսի արդարութեամբը մենք կարդարանամք նէ՝ անոր համար չէ որ անոր արդարութեանը նայելով և անիկայ մեզի օրինակ բռնելով մենք ալ անոր պէս կ'ընենք, և մեր գործքովը կ'արդարանամք։ Քանզի թէ որ ասանկ ըսվի նէ՝ մեր գործոյն մէկ անհուն զօրութիւն մը տալ պէտք կ'ըլլայ, որ քրիստոնեայներուն մէջ հիմա ասանկ ըսող չի կայ։ Ուրեմն՝ Ադամայ անհրնազանդութեան մեղքն ալ մեզանչողներուն մեղքը այն չէր որ՝ Ադամայ նայելով և անիկայ օրինակ բռնելով անոր պէս մեղք գործեցին. այլ՝ Ադամայ մեղքը անոնց ալ անցաւ. և նոյն Ադամայ մեղքն էր որ ա-

մէն մարդիկ մեղաւոր ըրաւ. ինչպէս որ նոյն իսկ Քրիստոսի արդարութիւնն է որ ամէն մարդ կարդարացընէ։ Կարդա յիշեալ գլուխը։

Սուրբ առաքեալը այս վարդապետութեամբս սկզբնական մեղքը հաստատելէն ետքը՝ ասոր համար հնարված դեղն ալ յաջորդ գլուխին սկիզբը կը բացատրէ։ Հին գերբորդ գլուխին վերջը ըսած էր. ինչպէս որ մեղքը մահուան մէջ թագաւորեց. ա նոր պէս ալ շնորհքը Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ ձեռքովը յաւիտենական կենաց մէջ արդարութեամբ պիտի թագաւորէ։ Սակայն վեցերորդ գլուխին սկիզբը հարցմունք մը կը հանէ. հիմա ի՞նչ ըսեմք կրսէ. յաճախ մեղք մընենք որ շնորհքը շատնայ։ Եւ պատասխան կուտայ. քա՛ւ լիցի. մեղքերուն նայելով մենք մեռանք նէ՝ տակաւին ի՞նչպէս մեղքի մէջ կենանք։ Քրիստոսի մահուամբը մեղքերնիս ջընջվելուն համար՝ որովհետեւ մեղաց պատիժ մահը պիտի ըլլար, և մեղքը մահով պիտի ջընջվէր. մենք մեռածի պէս եղանք. քանզի Քրիստոսի մահուանը արդիւնքը մենք վայելեցինք։ Եւ այս Քրիստոսի մահը ինչո՞վ մեզի սեպհականած կ'ըլլամք կոր։ Մկրտութեամբ։ "Եթէ ո՞չ գիտէք, զի որ միանգամ մկրտե„ցաք 'ի Քրիստոս Յիսուս՝ 'ի մահ անդր „նորա մկրտեցաք։ Թաղեցաք ընդ նմին մը„կրտութեամբն 'ի մահ. զի որպէս յարեաւ

„Քրիստոս 'ի մեռելոց փառաւքն Հօր, նոյն-
„պէս և մեք 'ի նորոգութեան կենաց շրջեսցուք „
(գ. 3. 4.)։ Այսոր Հայրն վերը մկրտու-
թեանը խաչակցութիւն կրսէ. „Զի մարդ-
„դն մեր խաչակից եղեւ նորա. զի խափա-
„նեսցի մարմին մեղացն „ (Նդ. 6)։ Այսով
ալ պայծառ կիմացվի մկրտութեան վերը-
տին ծնունդ ըլլալը. և Քրիստոս երբ որ
հարկ դրաւ ամէն մարդու որ մկրտվին՝
պատճառ դրաւ որ՝ „Զի ծնեալն 'ի մարմ-
„նոյ մարմին է. և ծնեալն 'ի հոգւոյ հոգի է „
(Յովհ. գ. 6)։ Պետրոս առաքեալ ալ նոյն-
պէս կը խօսի. „Քրիստոս միանգամ վասն
„մեղաց 'ի վերայ ձեր մեռաւ, արդարն 'ի
„վերայ անարդարաց, զի զձեզ մերձեցուս-
„ցէ առ Աստուած „, ըսելէն ետքը՝ առ
Աստուած մերձենալու միջոցը կը պատմէ.
„Որ և զձեզ ըստ նմին օրինակի կեցուցանէ
„մկրտութիւնն. ոչ զմարմնոյ աղտն 'ի բաց
„ընկելով. (այսինքն՝ չէ՛ թէ ջուրը իրեն բը-
նական զօրութիւնովը, որ է մարմնական
աղտեղութիւնը մաքրելը), այլ զբարուք մը-
„տաց հանդէս առ Աստուած 'ի ձեռն յա-
„րութեանն Յիսուսի Քրիստոսի (ա. Պետր.
գ. 18. 21)։ Այս Բարուք մտաց հանդէս բառ-
ը ինչ ըլլալն ալ ջորրորդ գլուխին սկիզբը
կը բացատրէ. „Քրիստոսի ջարչարեալն մարմ-
„նով վասն մեր. և դուք 'ի նոյն միտս վա-
„ռեցարուք „։ Այսինքն՝ Քրիստոս ի՛նչ
մտքով մեռաւ նէ՝ դուք ալ այն միտքը ու-

նեցէք։ Եւ որովհետեւ Բրիստոսի մեռնելուն նպատակը՝ մեղաց պատիժը կրել էր նոյնպէս դուք ալ միտումեամբ որպէս թէ նոյն մեղաց պատիժը կրելու համար մեռածի պէս եղէք։ Եւ այս առաքելոյս վարդապետութիւնը ամէն կերպով Պօղոսի առաքելոյն վարդապետութեանը համեմատ կուգայ. և մոքերնին իրարմով կը բացվին։ Ինչպէս որ յայտնի խօսքն ալ, "Օ՛ի որ չարչարելի մարմնով՝ դադարէ՝ի մեղաց", նոյն խօսքն Պօղոսի խօսքն է. "Որ մեռանին՝ արդարացեալ է՝ի մեղաց անտի" (Հռոմ. գ. 7)։

Գուցէ կարծէք ընես որ Պետրոս առաքելոյ ըսած մեղքը ամէն մարդու գործած մեղքերն են. սկզբնական մեղքի խօսք չի կայ. ուրեմն Պօղոսի ըսած մեղքն ալ սկզբնական ըսված մեղքը պիտի չըլլայ. որովհետեւ այս երկու առաքելոյս խօսքը իրարմով պիտի հասկըցվին։

Այսոր կըպատասխանեմ. Պետրոս առաքեալը այս մեղքերս կը յիշէ նէ՝ հեթանոսաց կամքը կատարվել կըսէ. "Բանզի բաւական է անցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց"։ Բսել կ'ըլլայ որ՝ այս մեղքերս թէպէտ թէ՛ հեթանոս թէ՛ քրիստոնեայ կը գործեն. բայց հեթանոսաց վրայ աւելի զօրութիւն ունի. անոնց վրայ կը թագաւորէ. անոր համար կամք հեթանոսաց կ'ըսվի։ Եւ ինչո՞ւ համար կը թագաւորէ անոնց վրայ. այս տեղս է որ Պօղոս

առաքելոյն բասծին պիտի նայիմք։ “Մի՛
„այսուհետեւ թագաւորեսցեն մեղք ի
„մահկանացու մարմնոյ ձեր . . . մեղք ձեզ
„ոչ տիրեսցեն . քանզի ոչ էք ընդ օրինաւք՝ այլ
„ընդ շնորհաւք . . .։ Օ՛ի էիք ծառայք մեղա-
„ցին . . . արդ ազատեալք ի՛ մեղացն՝ ծա-
„ռայեցէք արդարութեանն „ (Հռոմ. գ.
12. 14. 17. 18)։ Մեղք մի՛ գործէք ասելով
պատուէր տալէն կերեւի որ՝ այն առենն
ալ մեղք կրնային գործել . ուրեմն մեղքին
տիրելը , և իրենց մեղքի ծառայ ըլլալը
ի՞նչ պիտի ըլլայ . և մեղքէն ի՞նչպէս ա-
զատվելը են մարդիկ՝ որ կրնան նորէն մեղք
մտանել։ Մահուան թագաւորութիւնը Ա-
դամայ մեղաւք տիրելով՝ այն մահուան մէջը
մեղքը թագաւորեց . “Թագաւորեաց մեղ-
„քն ի՛ մահու անդ „ (Հռոմ. ե. 21) . ա-
նանկ է նէ՝ սկզբնական մեղայ տակը եղող-
ները՝ մեղայ ծառայ են . ամէն տեսակ մե-
ղայ մէջ իյնալու դիւրութիւն ունին . և
զիրենք մեղքէ պահպանելու դժուարու-
թիւն կը քաշեն։ Մկրտութիւնով սկզբնա-
կան մեղքէն ազատելով՝ մեղայ ծառայու-
թենէ ալ կ՚ազատին . շնորհայ տակ կը
մտնեն . որ անանկ շնորհէ մը նէ՝ որ թէպէտ
մեղքէ փախչելը մարդոյս դիւրին կ՚ընէ ,
բայց ազատ անձնիշխանութիւնը չի վեր-
ցուներ . և ով որ անկէց ետքը մեղք գոր-
ծէ նէ՝ ազատութեան վիճակէն ինքզինք
կամաւ ծառայութեան մէջ ձգած կ՚ըլլայ։

Այս մեր տուած մեկնութեանը հաստատութիւն կուտան բոլոր քրիստոնէից եկեղեցիք, որ ամէնքն ալ կ՚ըսեն թէ՝ մկրտութեամբ սկզբնական մեղքը թողութիւն կը գտնէ. և ասոր յայտնի ապացոյց կը բերէ սուրբն Օգոստինոս՝ մանր տղայքը մկրտելու սովորութիւնը, որ թէ որ սկզբնական մեղք չըլլար նէ՝ մկրտութեան կարօտ ըլլալու չէին։

Բայց ատեն ատեն աղանդաւորներ եղան, և մինչեւ հիմայ կան, և օտար ազգերէ սորվելով մեր ազգին մէջն ալ կրնան մտնել, որ մկրտութիւնը մէկ լոկ արարողութիւն մը սեպելով, և ասկէց մեղաց թողութիւն չըլլար ըսելով՝ անտարբեր բան մը կը կարծեն. ըլլայ ալ նէ կ՚ըլլայ՝ չըլլայ ալ նէ՝ կ՚ըսեն. հետեւեալ գլխոյն մէջ ասոնց համառօտ պատմութիւնը ընենք։

ԳԼՈՒԽ Բ.

Մկրտութիւնը հարկաւոր չի սեպողները ովքեր են։

1. ԱՆԱԲԱՊՏԻՍՏԵՐԸ՝ որոց աղանդապետը Մանի՝ Բրիստոսի 274 թուին չարաչար մեռցուցին պարսից Շապուհ թագաւորին հրամանաւը կաշին քերթելով, ամէն մեր գիտցած աղանդաւորներէն առաջ համարձակեցան մկրտութեան խորհուրդը անօգուտ սեպելու։ Ասել չէ որ բնաւ չէին մը-

կըրտեր. այլ կը մկրտէին. և մկրտութիւն-
նին վաւերական ըլլալուն վրայ հին հայրա-
պետաց մէջ տարաձայնութիւն ալ կար։
Սուրբ Բարսեղ կեսարացին՝ իր կանոնգիր-
քին առաջին կանոնովը՝ ասոնց մկրտութիւ-
նը անվաւեր կը սեպէր։ Սուրբ Յրոնիմոս
ընդդէմ Լուկիֆերեանց գրքին 9 գլուխին
մէջ կը պատմէ՝ որ արեւմտեան եկեղեցւոյ
մէջ ընդունողներ կային։ Յետոյ Օգոս-
տինոս՝ որ ընդդէմ հերձուածոց գրքին քա-
ռասուն և վեցերրորդ գլուխը ասոնց հա-
մար մկրտութիւնը անօգուտ բան մը կը
սեպէին կ'ըսէ, յայտագոյն բնութեան բար-
ւոյ գրքին քառասուն և ութը գլուխին մէջ
անանկ կը ցոյցնէ որ կը մկրտէին։ Ասել
կ'ըլլայ որ՝ թէպէտ կը մկրտէին, բայց անօ-
գուտ մէկ բան մը սեպելով, ուղղը միայն
կը մկրտվէր։ Յետ որոմհետեւ այս աղան-
դաւորներս զերեկնք ամենեւին ցրցընել չէ-
ին ուզեր. ուստի ի՛նչ ըլլալին չի հասկը-
ցընելու համար կեղծաւորութեամբ ալ
մկրտութիւն գործ կածէին։

Ասոնք հիմակվան Անթէխիդներուն
պէս՝ որ Նէմցէի նորաղանդներուն Ա-
ձիօնալիզ ըսված աղանդոյն մէկ բաժանու-
մն է, կ'ըսէին որ աշխարհքիս մէջ ինչ
գոյացութիւն կայ նէ՝ աստուած է. ուստի
մարդոյս հոգին ալ աստուծոյ մէկ մասն կը
կարծէին։ Ասոր համար անանկ կը սեպէին
որ՝ անհնար է որ հոգիին վրան մեղք տի-

բէ. և ասով սկզբնական մեղքն ալ ուրա-
նալով՝ մկրտութիւնը որ այս մեղացս դէմ
դեղ դրված է, անօգուտ կ'ըլլար։

Ասկէց զատ՝ Քրիստոսի ճշմարտապէս
մարդկային մարմին առած ըլլալը կուրանա-
յին. որով Քրիստոսի խաչ ելլելուն և մեռ-
նելուն ալ ճշմարտութեանը չէին հաւա-
տար։ Եւ որովհետեւ մկրտութիւնը՝ Պօ-
ղոս առաքելոյ ըսածին պէս՝ Քրիստոսի խա-
չակից ըլլալ էր. ասկէց բնապէս կը հետեւէր
որ մկրտութիւնն ալ պարապ և անօգուտ
բան մըն է։

Երրորդ պատճառ մըն ալ այս էր որ՝ աշ-
խարհքիս վրայի նիւթական բաները ամէ-
նքն ալ սատանայէն ստեղծուած է կըսէին՝
հին կրակապաշտ պարսից պէս. անոր հա-
մար չէին կրնար հաւատալ որ՝ բարի
աստուածը՝ որ է քրիստոնէից Աստուա-
ծը, իր խորհուրդներուն համար չար
աստուածոյ կամ սատանայի ստեղծած նիւ-
թերը գործածէ։ Հետեւաբար՝ ջրով մկրը-
տութիւնէն մեղաց թողութիւն ըլլալուն չի
հաւատալով՝ մկրտութիւնը անօգուտ ըսե-
լու կ'ըլլար։ Ասոր համար՝ հիմակվան նոր-
աղանդներուն պէս՝ արտաքին պաշտօն չէին
ընդունէր. ոչ Հաղորդութիւն. ոչ Աւետարան.
և ոչ ուրիշ ասոնց պէս բաներ։

2. Ասոնց մոլորութիւնը շատ տեղ տա-
րածվեցաւ. և Եօթնեերորդ դարուն սկիզ-
բը Պողոս անուն մէկի մը ձեռքով Հայաստան

ալ մնաւ. և հետևողները Պողիկեան ըմբ-
ցան. Անգղիացի Պրոթեստանտ անուն նոր ա-
զանդ քարոզիչ մը կ'ըսէ որ՝ նոր աղանդու-
թեան առաջին տարածիչները այս Պողիկ-
եաններն էին։ Ու ասոնց դէմ մեր Յովհան
խնամատարը սուրբ հայրապետը յատուկ
ճառ գրեց։ Այս աղանդաւորներս մեծա-
մեծ խռովութիւններ ալ կը հանէին. յու-
նաց կայսերաց հետ ալ պատերազմեցան.
և պատերազմի մէջ գերիներ ալ բռնեցին։
Վասիլ Մակեդոնացի կայսրը Պետրոս Սիկի-
լիացի անուն մէկ մը ասոնց խրկեց Տիվրիկ
քաղաքը՝ գերիները ազատելու համար։ Ա-
սիկայ ատեն մը հոն կենալով անոնց մոլ-
որութեանը աղէկ տեղեկացաւ, և պատ-
մութիւնին գրեց Պուլղարիստանի աբք ե-
պիսկոպոսին. քանզի ինքը Տիվրիկ գրոնը-
ված ժամանակը խմացեր էր որ՝ մէկ ժողովք
մը են ըրեր. և իրենց կողմէն Պուլղարիս-
տան քարոզիչներ խրկելու խորհուրդ են ը-
րեր։ Ասոնք Պուլղարիստանէն Եւրոպայի
ուրիշ կողմերը. և հարիւրաւոր տարիներ
անցնելէն ետքը մինչեւ Ֆռանսայի մէջ
գացին. Օռլէան քաղաքը պղտորեցին։
Էրիֆասդ անուն մէկ մը ասոնց մէջ մըտ-
նելով՝ և զինքը անոնցմէ ձեւացընելով
մոլորութիւններնուն տեղեկացաւ. որ գրը-
սէն մարդու չէին բանար։ Ու մոլորու-
թիւնին այս էր, որ Քրիստոսի ճշմարտա-
պէս մարդկային մարմին առած բլլալը չէին

(223-59) 35450-66

ընդունիր. Մկրտութիւնով մեղքի թողութիւն չըլլար կ'ըսէին. հայն ու դինին Քրիստոսի մարմին և արիւն չեն կրնար ըլլալ կ'ըսէին։ Այսոնց դէմ ժողովք եղաւ Օռլեան քաղաքը 1017 թուին։ Կաղիստոս երկրորդ Հռոմայ հայրապետն ալ 1119 թուին Թուլուզ քաղաքը ժողովք ըրաւ ասոնց դէմ. և այն ժողովքին հինգերորդ կանոնին մէջ կը նշովէ անոնք՝ որ "Ցեառն մերոյ մարմնոյ և արեան խորհուրդը և մանր տղոց մկրտութիւնը և քահանայութիւնը և բոլոր եկեղեցական կարգը և օրինաւոր ամուսնութիւնը կը մերժէին"։ Այսպէր անուն մատենագիր մը՝ որ այն ժամանակներուն իմաստուն աստուածաբաններուն մէկն էր, կ'ըսէ որ, թէպէտ ասոնք մկրտութիւնը ընդհանրապէս անօգուտ կը սեպէին, բայց որովհետև այն առենները մանր տղայքը մկրտելը աւելի աչքի կ'երեւէր, չափահաս մարդիկ մկրտելու դիպողութիւն շատ չէր պատահէր, ուստի ասոնք մանր տղայքը մը-կրտել տալ չուզելովնին աւելի յայտնի կ'ըլլային։

3. Պողիկեանները Այրոպա այսքան տարածուեցան նէ՝ Հայաստան ալ կային. և տասն և մէկերորդ դարուն սկիզբները Թոնդրակեցի անունով նորէն երևան ելան։ Նարեկացիին առեններն ալ կային. և երանելին ասոնք աղէկ ճանչցեր էր, որովհետև 74 գլուխին կցորդ եկեղեցական ճառ

Հայաստանի Ազգային Գրադարան Библиотека Զ. Ա. Մ. ԱՐ Ս. Մարտիրոսյան անվան

սկիզբը խորագրին մէջը ասոնց նոր մանիքե-
ցի կ'ըսէ։ Աբիստակէս լաստիվերտցին ա-
սոնց ընդարձակ պատմութիւնը կ'ընէ. և
Հարք գաւառին Յակոբ անուն եպիսկոպո-
սին ալ ասոնց որոգայթը ինկած ըլլալով կը
քարոզէր կ'ըսէ՝ որ մեռելներու հոգւոյ հա-
մար պատարագ և նուէրքը և ողորմութիւն և
աղօթք ամենևին օգուտ չեն ըներ։ Գրիգոր
Անգիստրոս ասոնց համար կ'ըսէ որ՝ մկրը-
տութիւն չունէին. ուրիշ խորհուրդ ալ
չունէին. աղօթք և արտաքին պաշտամունք
ալ չունէին. ամենն ալ կը ծաղրէին. երբեմն
յայտնի և երբեմն գաղտնի։ Օր մը ասոնց
առաջնորդներէն մէկը Կիւրեղ անուն՝ տես-
նելով որ ժողովուրդը պատարագին առաջը
մեծ պատկառանքով կը կենար՝ ըսաւ. "Ո՜
„սնոտի յոյս քրիստոնէից. արդեօք ի՞նչ բա-
„նի յոյս ունիք դուք „։ Սուրբ մեռոնն ալ
ամէն կերպով կ'անարգէին և կը ծաղրէին.
Քրիստոսի տնօրինական խորհրդոցը և սուրբ
Աստուածածնին համար ալ հայհոյութեամբ
կը խօսէին։

4. Եւրոպա գացողները քանի՛ դնաց տա-
բածվեցան, և Յոհաննայի լանկրտօք գաւա-
ռը Աղլի ըսված քաղաքը բաղմութիւն ու-
նեցան. ուստի Աղլեցիք ըսվեցան. որ Աղբի-
գեանք ալ կրնամք ըսել. և Պալպայիդ գեր-
մանացին՝ որ հրէութէ նորադանդ եղած է,
իր նամակին մէջը այս Աղլիժօանները նոր-
աղանդուն առաջնորդներուն կարգը կը դը-

նէ. (Թղթ. 59)։ Այս նամակս ամերիկ կացի նորաղանդ քարոզիչները հայերէն թարգմանել տուած, և Դ-ՈՒ-ԱՆՈ-ՐԻ-Ն Մ. Յ. Ա. Պուլտայիրի Գերմանայի հրէի խորագրով տպած են իրմիր 1838 ին։ Այսոնք Կաթարոս և առաքելական ալ կ'ըսէին. Բայց Բրիա տոսի մարգեղութեան խորհուրդը կուրա նային կ'ըսէ Մատթէոս Փարիզ պատմիչը։

5. Այսոնցմէ էր Պետրոս պրիւի անուն ա զանդուորը. որ նորաղանդները կը յարգեն. բայց Պետրոս պատուական ըսուածը՝ որ ա սոր ժամանակակիցն էր, յայտնապէս հինգ մեղրութիւն կը յիշէ ասոր վրայ։ 1. Մանր տղոց մկրտութիւնը չէր ընդունէր։ 2. Օ ծեալ տաճարները կը հերքէր։ 3. Խաչին երկրպագութիւն ընելու տեղը կը կոտրտէր։ 4. Հաղորդութեան խորհուրդը կը հերքէր։ 5. Մեռելներու հոգւոյն համար տուրք տա լը և աղօթք ընելը կը ծաղրէր։ Այսոնք պատմելէն ետքը Պետրոս պատուականը կ'ը սէ. "Համբաւ կայ որ՝ դուք ոչ Յիսուս „Բրիատոսի կը հաւատայք, ոչ մարգարէնե „րուն, և ոչ առաքեալներուն։ Սակայն ա „սանկ համբաւներուն դիւրաւ հաւատալ „պէտք չէ. շատ անգամ ասոնք սուտ կ'ելլեն. „քանզի անանկ ըսողներ ալ կան ձեղի հա „մար՝ որ աստուածաշունչ գրոց կանոնն ալ „չէք ընդունիր"։ Ասել է թէ՝ աստուածա շունչ գիրքը ամբողջ չէք ընդունիր։ մէջէն գիրք կը պակսեցընէք։ "Բայց ես՝ կ'ըսէ,

ԵՐԻՎԱՆ ... Մ. Բ

„ստոյգ չեղած բաներուն վրայ ձեզ պախա-
„բակել չեմ ուզեր „ : Կալվին՝ Սերվէ հերե-
տիկոսին դէմ գրած ճառին մէջ՝ մանր տը-
զայոց մկրտութիւնը ուրանալը հայհոյու-
թիւն է կ'ըսէ : Բայց որովհետեւ Կալվին
Սերվէի հետ ուրիշ երեսէն թշնամութիւն
ունէր, անոր գլուխը փորձանքի բերել ու-
զելով՝ անոր դէմ խօսած ատենը պէտք է-
զաւ անոր այս մոլորութեանը անունը հայ-
հոյութիւն դնել : Ուն իր միտքը ի՞նչ ը-
լալը եղբը կը տեսնենք :

6. Այս աղանդաւորներուս անմիջական
յաջորդները եղան նորաղանդները : Ասու-
թեր՝ որ նորաղանդութեան առաջին հայ-
բապետն է, մկրտութիւնը կ'ընդունէր :
Բայց անոր գլխաւոր աշակերտը Փիլիպ-
պոս Մելանքթոն՝ Աստուածաբանական
տեղեաց գրքին մէջ կ'ըսէ . « Թլփատու-թիւ-
„նը ոչինչ է . անոր պէս մկրտութիւնն ալ
„ոչինչ է . տերունական սեղանոյ հաղորդելն
„ալ ոչինչ է : Այնպէս մարդուն նայելով սատ-
„ուածային բարեբարութեան կամացը վը-
„կայներն են „ : Այսկէց մնած է մկրտու�ը
թլփատութեան հաւասար բռնելը . որուն
վրայ առանձին գլուխով պիտի խօսիմք :

7. Զուինգլի, որ նորաղանդութեան մէկ
ուրիշ նախահայրն է, Բասլայպոլիսն յաղա-
գը սկզբնական ծեղոց ճառին մէջը սկզբնական
մեղքին համար կ'ըսէ . « Այսիկայ մեղք չէ .
„այլ մէկ թշուառութիւն մը և պակասու-

„թիւն մը և հիւանդութիւն մըն է։ Եւ
„սկզբնական մեղքը լոկ հիւանդութիւն չէ՝
„այլ յանցանք է ըսելը շատ տկար՝ և սուրբ
„գրոց ալ հակառակ խօսք է „։ Եւ ասկէց
այս վճիռս կը հետեւեցնեմ որ՝ Քրիստոսի
մահուամբը սկզբնական մեղքը մարդոյս վրա-
յէն բոլորովին վերցաւ. ուստի այս մեղքս
վերնալու համար մկրտութիւն պէտք չէ։
Ինանկ որ՝ հիմա սկզբնական մեղաց համար
մարդ չի դատապարտվիր. անհաւատներուն
տղայքը անգամ առանց մկրտութեան մե-
ռնելուվնին դատապարտութեան արժանի
բան մը չունին. փրկութեան կը հասնին։
Այսոր համար՝ Յովանչիսկոս առաջին թագա-
ւորին խրրկած հաւատոյ դաւանութեանը
մէջն ալ՝ երկնից արքայութիւնը տեսնելու
յոյս ունեցած մարդոց անունը շարելով՝
այս անուններըս կը դնէ. "Երկու Ադամ,
„փրկեալն ու փրկողը. Աբէլ, Էնովք, Նոյ,
„Աբրահամ, Իսահակ, Յակոբ, Յուդա,
„Մովսէս, Յեսու, Գեդէոն, Սամուէլ, Փե-
„նէհէս, Էղիա, Էղիսէ, Դասալ՝ իրեն գու-
„շակած Աստուածամայրը կուսին հետ մէկ
„տեղ. Դաւիթ, Էզեկիա, Յովսիաս, Յով-
„հաննէս մկրտիչ, Պետրոս, Պօղոս։ Հոն
„պիտի տեսնես կ'ըսէ նաեւ Հերակլէս,
„Թէսէոս, Սոկրատ. Աբիգդիտէս, Անտի-
„գոնոս, Նումա, Կամիլլոս, Կատոնները և
„Սկիպիոնները „։ Սուրբ գրոց տեղեակ
եղողները առաջին անունները կը ճանչ-

նան թէ ով են։ Այդքի անուններրը ամէ-
նուն ծանօթ չըլլալով համառօտ մը հաս-
կցընենք։ Հերակլէս գող մըն էր և շնա-
ցող. և կռապաշտներրը զինքը իբրև աստ-
ուած պաշտեցին։ Ուրիշ շնացող մըն ալ Թե-
սէոս էր։ Սոկրատէս՝ մեռնելու ատենը
կտակ ըրաւ որ Ասկղեպիոս կուռքին մէկ
աքլոր (խօրօզ) մը զոհ ընեն։ Նումա՝ հռո-
մայեցիներուն կռապաշտութիւն սորվե-
ցուց։ Կատոն ինքը զինք մեռցուց։ Ասոնց
և Պօղոս և Պետրոս առաքեալներուն և
նոյն իսկ Քրիստոսի մէկ տեղ գտնըվելուն
համար միայն սկզբնական մեղաց վերցած ըլ-
լալը չօգտէր. հարկ է որ մարդոց իրենց կա-
մքը գործած մեղքերնին ալ ջնջըված ըլլան.
և այն՝ առանց Քրիստոսի հաւատալու ալ։
Ասոր համար Լութեր՝ Փոքր դասանոթին հա-
ւատոյ գրքին մէջ կ'ըսէ որ՝ „Այս անոր փրը-
„կութենէն յետոյ կըտրած եմ. քանզի (հա-
„զորդութեան) խորհրդոյն դէմ կենալը հե-
„րիք չի սեպելով՝ կռապաշտ ալ եղաւ, անօ-
„րէն կռապաշտները երանեալ հոգւոց կար-
„գը դնելով. մինչև Սկիպիոնը, որ եպիսկու-
„բեան (հեշտասէր և մարմնասէր) մըն էր.
„և Նուման, որ հռոմայեցւոց մէջ կռա-
„պաշտութիւն սահմանելու համար ստուա-
„նայի գործիք եղաւ։ Քանզի թէ որ անօ-
„րէնները և կռապաշտները և եպիսկուրեան-
„ները սուրբ և երանելի ըլլան նէ՝ մկրտու-
„թիւնը և ուրիշ խորհուրդները և աստ-

„ուածաշունչը և Յիսուս Քրիստոս անգամ „ի՞նչ բանի պէտք կ՚ըլլան „։

8. Ն՚իպպոն անուն անգլիացի անհաւատը Քրիստոնեայները կըպարսաւէր որ՝ կըռապաշտները աբքայութիւն չեն երթար և փրկութեան չեն հասնիր կ՚ըսեն։ Ասոր դէմ մէկ Ընկլիքան նորպանդ մը գիրք մը շինեց. և այն գրքին մէջ Ընկլիքան եկեղեցւոյ կողմէն խօսելով կ՚ըսէ. "Ամենեւին „չեմ վախնար հաստատելու, որ մեր գթած „եկեղեցին իր վճիռներուն մէջ անանկ „տգեղ ազատ չէ ունեցած, ինչպէս է խեղա„ցի և առաքինի կռապաշտները դատա„պարտելը „։ Ասել կ՚ըլլայ որ՝ Ընկլիքան եկեղեցին ալ մկրտութիւնը անօգուտ սեպողներէն է. և նոյն եկեղեցւոյն հիմակվան պատմութիւններէն գիտեմք որ՝ մկրտուելու շատ հոգ չեն ըներ։ Ու յիրաւի. թէ որ կռապաշտները անգամ դատապարտութենէ ազատ կը բռնէ եկեղեցիին նէ՝ մըկրտուելու հարկ մը չի մնար։ Ընոր համար Հօսուէյ անուն Ընկլիքան եպիսկոպոսը՝ որ 1761 ին մեռած է, ոչինչ և տղայական աբարոգութիւն կ՚ըսէր մկրտութեան համար։

9. Կալվինին ըսածը վերը տեսանք, (թիւ 5), որ մանր տղայոց մկրտութիւնը ուրանալը հայհոյութիւն է կ՚ըսէր։ Հիմա տեսնենք որ ինքը այս հայհոյութենէն որքան հեռու է։ Սահմանագրութիւն գիրքին մէջ (Գ. գ. Գ. 15. 16. և այլն). կ՚ըսէ որ՝

հաւատացեալներուն զաւակներն ալ քրիս-
տոնեայ՝ և սրբեալ կը ծնանին. և մկրտու-
թիւնը այս սրբութեանս միայն մէկ կնիքն
է։ Այսոր հաստատութիւն սա վկայութիւնը
կը բերէ. «Լոս քուկին ու քու զաւակնե-
„րուդ և ցեղիդ Աստուածը ըլլամ„ (Օրն.
ԺԷ. 7)։ Բանզի ասոնք Աստուածաշունչէն
վկայութիւն չունեցած բան չեն ըսեր։ Ա-
կէց կը հետեւցընէ որ՝ մկրտութեան բուն
էութիւնը, որ է եկեղեցւոյ անդամ ըլլալը
և սրբութեան վիճակի մէջ գտնըվիլը. քրիս-
տոնէից տղայքը առաջկուց ունին. չի վայլեր
որ ասոնց այս բանս ունենալուն նշանը չի
տրվի։ Բայց միայն այս բանիս համար՝ տը-
ղայքը չի մկրտողները հայհոյիչ սեպել չի
վայլեր։ Իր միտքը իր աշակերտներէն ա-
ւելի աղէկ կը տրվինք։

10. Իրեն հաւատարիմ աշակերտը՝ Թէ-
ոդորոս Պէզա՝ ըսեր է. «Հաւատացեալնե-
„բուն մանր տղայքը մկրտվելէն առաջ հա-
„ւատոյ սերմը և բողբոջը ունին. քանզի
„Աստուած անոնք իրենց մօրը արգանդէն
„սրբած է„։ Բայց առաքեալներուն ժա-
մանակէն քիչ մը ետքը Տերտուղիանոս՝ իր
ժամանակի քրիստոնէից ամէնուն հետ մէկ
տեղ ըսած էր Ջատագովութեան 12 գլու-
խին մէջ. «Քրիստոնեայները քրիստոնեայ
„չեն ծնիր, այլ ետքէն քրիստոնեայ կ'ըլ-
„լան„։ Ու վերստին ծնանիլ ըսածն ալ բը-
նական նշանակութեամբ՝ առաջկուց ան-

գամ մը ծնած ըլլալ կը պահանջէ։

11. Կալվինականներուն վարդապետութեամբը՝ մկրտութիւնը միայն քրիստոնեայները քրիստոնեայ չեզոքներէն որոշելու մէկ նշան մըն է, ինչպէս որ թլփատութիւնը հրեայներուն ասանկ որոշիչ նշան մըն էր։ Ուստի միայն քարոզի ժողվված առեւնին բազմութեան առաջը մկրտութիւն տալու է, ինչպէս որ Ն՛ինեվայի եկեղեցւոյ կարգադրութեան առաջին կանոնը կը պատուիրէ։ Ուստի տղայք ամէն առեն առանց մկրտութեան մեռնելու վտանգի մէջ են։ Այսոր վրայ սա հետեւեալ պատմութիւնս գրեմ։

Մուսքուլուս՝ որ Օուիցցէռիի Պէռնա քաղաքին հոգաբարձուն էր, պատուէր ըրած էր որ միայն կիրակի օրերը մկրտութիւն ըլլայ։ Սամուէլ Հուպէրդ գիշերով մահուան վտանգի մէջ ինկած տղայ մը մկրտեց։ Իմացվածին պէս՝ ապստամբ և հերետիկոս է ըսելով քաղաքական ատեանը կանչեցին։ Հուպէրդ տղուն մահուան վտանգի մէջ ըլլալը և հոգւոյն փրկութեան հարկը կը պատճառէր։ Մուսքուլուս կ՚ըսէր որ՝ մկրտված չըլլալը մարդս Աստուածտեսութենէ չարգիլէր։ Հուպէրդ այս խօսքս ամբարշտութիւն է ըսելով հեռեցաւ։ Պէռնա և Զուռիկ քաղաքի քանի մը քարոզիչներուն հետ Պէզա ալ կանչվեցաւ, այս բանիս վրայ ժողովք ըրին, քննեցին, և վճիռ ըրին, Հուպէրդը դատապարտեցաւ և հո-

գեւոր պաշտօնէն զբրկուեցաւ։

12. Այս վարդապետութիւնս՝ որ հաւատացեալց տղայքն ալ հաւատացեալ կը ծնանին, մկրտութեան կարօտ չեն, Կալվինի և Պեզայի և քանի մի մասնաւորաց կարծիքները չեն. այլ բոլոր Կալվինականներուն լսութիւնը ժողովքով այսպէս վճռած են։ Տօրտրէխտի ժողովքը, որ 1618 ին ըրին կալվինականները. ասանկ կը խօսին սահմանադրութեց 17 յօդուածին մէջ։ "Այսուհետ „յին խօսքը յայտնելով որ հաւատացեալց „զաւակները սուրբ են. չէ՛ թէ բնու„թեամբ, այլ իրենց ծնողացը ըրած ուխ„տին մէջ ծնած ըլալուն համար. ուստի „հաւատացեալ ծնողքները իրենց տղոցը „ընտրութեանը և փրկութեանը համար ա„մենեւին կասկած չընեն, երբ որ ասոնք „իրենց պզտիկ հասակին մէջը կը մեռնին „։

13. Այս մօտերը Իզմիր նորաղանդները ամսօրեայ տետրակներ հանել սկսան Ա-եպարանական չարոզ-Ի-նչ անունով. այս տետրակներուն Փետրվար ամսվան համար հանածնին Մկրտութեան վրայ ըլալով՝ վերոյիշեալ աղանդաւորներուն ըսած խօսքերը կը պարունակէ իր մէջը. և սկզբնական մեղաց դեղ ըլալը կամ չըլալը թէպէտ յայտնի չըսեր, Բայց մակաբերութեամբ կը հասկըցնէ։ Աւելի յայտնի խօսքերը հոս դընեմք։

"Մինք առ այս տեղս՝ որ ինչպէս ամե-

„նեւին ստոյգ չէր թէ Յովհաննէսին մկրտութիւնը ընդունողներուն բոլորն ալ „ճշմարտապէս զղջացող էին, նմանապէս ա„մենեւին ստոյգ չէ թէ՝ քրիստոնէական „մկրտութիւնը ընդունողներուն բոլորն ալ „Հոգւով սրբով ճշմարտապէս նորոգված „են, կամ Քրիստոսի հետ միաւորված են, „կամ Աստուծոյ սուրբ գերդաստանին մէ„ջը որդեգրութեան մտած են։ Յովհան„նէսին մկրտութիւնը ըստ ինքեան ապաշ„խարութիւն էր. ու քրիստոնէական մկրտութիւնը ըստ ինքեան նորոգութիւն կամ „վերստին ծնանիլ է „ (Թղթ. 31)։

Մենք վերջին խօսքէն սկսիմք։ Թէ որ մկրտութիւնը ըստ ինքեան նորոգութիւն չէ՝ նէ՝ Յզեկիել մարգարէին ըսածը ի՞նչ է. և ի՞նչ կերպով լրացած է. “Յս առից զզ„ձեզ 'ի հեթանոսաց, և ժողովեցից զձեզ „յամենայն ազգաց. և տարայց զձեզ յեր„կիրն ձեր. և ցանեցից 'ի վերայ ձեր ջուր „սուրբ, և սրբեսջիք յամենայն պղծու„թեանց ձերոց, և յամենայն կռոց ձերոց „սրբեցից զձեզ. և տացս ձեզ սիրտ նոր. „և ոգի նոր նորոգեցից 'ի ձեզ. և հանիցս „զսիրտն քարեղէն 'ի մարմնոց ձերոց, և „տացս ձեզ սիրտ մարմնեղէն. և զհոգի իմ „տացս ձեզ... և եղիջիք ինձ 'ի ժողովուրդ, „և ես եղէց ձեզ Աստուած „։ (Յզեկ. լզ. 24. 25. 26. 28)։ Մկրտվողները ամէնն ալ ճշմարտապէս Աստուծոյ որդեգրութիւն մը-

տած չէն նէ՝ Պօղոս առաքելոյն ըսածը ի՞նչ
կը նշանակէ. «Ամենեքին որդիք Աստուծոյ
„էք հաւատովք ի Քրիստոս Յիսուս։ Որք
„միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք,
„զՔրիստոս զգեցեալ էք. (անանկ է նէ՝
„Քրիստոսի հետ միաւորված ալ են). չկ՚
„խտիր . . . զի ամենեքեան դուք մի էք ի
„Քրիստոս Յիսուս։ Եւ եթէ դուք Քրի-
„ստոսի էք՝ ուրեմն աբրահամու զաւակք
„էք. ըստ աւետեացն ժառանգք»։ (Գաղատ.
գ. 26. 27. 29)։ Թէ որ մկրտվողները Քրիս-
տոսի հետ միաւորված չեն նէ՝ Քրիստոսի
անդամ ըլլալնին ի՞նչ մտքով հասկընալու
է. և Պօղոս առաքեալ ի՞նչպէս կ՚ըսէ. «Ու-
„թէ ոչ գիտէք զի անիրաւք զարքայութիւ-
„նըն Աստուծոյ ոչ ժառանգեն . . . և դուք
„այնպիսի ումանք էիք. այլ լուացարուք,
„այլ սրբեցարուք, այլ արդարացարուք
„յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-
„սի, և ի Հոգին Աստուծոյ մերոյ։ (Անանկ
է նէ՝ այն լուացվելը՝ պոռնկութեան և կը-
„ռապաշտութեան և ուրիշ մեղքերուն ա-
„մենէն ալ կը սրբէ եղեր)։ . . . Ոչ գիտէք
„եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստո-
„սի. արդ առեալ զանդամս Քրիստոսի
„առնիցէ՞ք անդամս պոռնկի» (ա. Կորն. զ.
9. 11. 15)։ Եւ քիչ մը վարը կ՚ըսէ. «Եթէ
„ո՞չ գիտէք, զի մարմինք ձեր տաճար են
„Հոգւոյն որ է ի ձեզ՝ զոր ունիք յԱստու-
„ծոյ. և չէք անձանց տեր» (Անդ. 19)։

Հաւատքը հոգւոյ կարողութեան մէկ գործն է. լոկ հաւատով հոգին կը միանայ ընդ Աստուծոյ. բայց քանի՛ որ մարմինը Աստուծոյ տաճար և Քրիստոսի անդամ է՝ Հոգին աստուծոյ հետ չի կրնար միանալ. և մարմինը Քրիստոսի անդամ՝ մկրտութեամբ կ'ըլլայ. ինչպէս որ առաքելոյն խօսքին կարգէն յայտնի է։ Բայց թէ որ մկրտութիւնը ըստ ինքեան նորոգութիւն և վերստին ծնանիլ չէ. և քրիստոնէական մկրտութիւնը ընդունողներուն բոլորն ալ Հոգւով սրբով ճշմարտապէս նորոգված չեն, կամ Քրիստոսի հետ միաւորված չեն, կամ Աստուծոյ որդեգրութեան մտած չեն նէ՝ մկրտութիւնը ի՞նչ է։ Պատասխան կուտայ Աւետարանական քարոզիչը։

"Մկրտութիւնը կնիք մըն է դաւանութեան. ու թէ որ հաւատքով եղած է ան դաւանութիւնը՝ պատուական է մկրտութիւնը. իսկ եթէ առանց հաւատքի՝ ապարդ և անպիտան"։ Մկրտութիւնը դաւանութեան կնիքն է ըսելը՝ նոյն իսկ Կալվինին խօսածն է։ Բայց քրիստոնեայները գիտեն որ՝ դաւանութեան կնիքը՝ դրոշմն է. որ եկեղեցւոյ խորհուրդներուն մէկն է. և անունն ալ նոյնութիւն կը ցոյցնէ. քանզի ջրով լուացուիլը կնիք ըլլալու կամ նշանակելու հետ յարմարութիւն մը չունի. դրոշմելն (տամղալամիշ ընելը) ու կնքելը (մէօհիւրլէմիշ ընելը) մէկ բան են։ Այլ

և՝ կնիքը մէկ բանին հաստատութիւնն է. և հաստատութիւն՝ լատիներէն հօնֆիրմայիօ կ՚ըսվի. դրոշմին ալ Հռոմէական եկեղեցին այս անունս կուտայ։ Բ. սածնիս սուրբ գրոց խօսքն ալ կը հաստատէ։

Պօղոս առաքեալ Եփեսոս գնաց նէ՝ հոն քանի մի աշակերտներ գտաւ. աշակերտ ըլլալվնին 'ի հարկէ քրիստոնեայ ալ էին. ըսել է որ՝ մկրտված էին. և ինքն ալ այն պէս գիտէր. ուստի երբ որ Հոգւոյն սրբոյ անունն ալ լսած չունիմք ըսին նէ՝ դուք մկրտված չէ՞ք մի չըսաւ. այլ՝ "Իսկ "յի՞նչ մկրտեցարուք" ըսաւ։ Բայց մկրտված ըլլալնին հաստատութեամբ գիտնալով ալ՝ "Հաւատացած ատենիդ Հոգին սէ՞ր "առիք մի հարցուց" (Գործ. ԺԹ. 2. 3)։ Հոգին սուրբը առնելով ի՞նչ ըլլալն ալ նոյն առաքեալը նոյն եփեսացւոց գրելով կը հասկրցընէ. "Մի՛ տրտմեցուցանէք զՀոգին "սուրբ աստուծոյ, որով ինքեարս յաւուրն "փրկութեան" (Եփես. դ. 30)։ Այս Հոգւով սրբով կնքբվիլը մկրտութենէն բոլորովին տարբեր բան մը ըլլալուն ուրիշ և աւելի յայտնի վկայութիւն ունիմք նոյն սուրբ գրոց մէջ։ Փիլիպպոս Ստեփաննոսի հալածմանէն Սամարիա փախաւ, և հոն Քրիստոս քարոզեց. շատ մարդ հաւատացին "Փի-"լիպպոսի, որ աւետարանէր վասն արքայու-"թեանն Աստուծոյ, և անուանն Յիսուսի "Քրիստոսի. մկրտէին ամենեքեան արք և

„կանայք „ : Երբ որ երուսաղէմ գրանցվող առաքեալները լսեցին որ Սամարացիներն ալ Աստուծոյ խօսքը ընդունեցին . իրենց կողմէն Պետրոսն ու Յովհաննէսը խրկեցին : “Որք իջեալ կացին յաղօթս 'ի վերայ նոցա , „ որպէս զի առցեն զՀոգի սուրբ : Զ ի ցայն „ ժամ չէ եւս էր եւ ոչ 'ի վերայ միոյ նոցա „ հասեալ , բայց միայն մկրտեալք էին յա „ նուն տեառն Յիսուսի : Յայնժամ եդին „ զձեռս 'ի վերայ նոցա . և առնուին զՀո „ գին սուրբ „ (Գործք . ը. 12. 15. 16. 17) : Թէ որ Հոգին սուրբ առնելնին կնքվիլ էր՝ ինչպէս որ Պօղոս առաքեալ ըսաւ Եփեսացւոց Թղթոյն մէջ , և թէ որ դաւանութեան կնիքը մկրտութիւնն է՝ ինչպէս որ աւետարանական քարոզիչը Կալվինէն առնելով ըսաւ , ըսել հարկ կ'ըլլայ որ՝ այս Սամարացիներս՝ որ Փիլիպպոս մկրտեց , և սրբազան մատենագիրը երկու անգամ կը կրկնէ թէ մկրտվեցան . մէկ մը տասներկու և մէկ մին ալ տասն և վեց համարներուն մէջ , միանգամայն մկրտված էին և չէին : Այս հակասութիւն կ'ելլէ Պ ուկաս աւետարանիչին՝ և նոր աւետարանական քարոզիչին ըսածները իրարու հետ բաղդատելով : Եւ որովհետեւ ասանկ հակասութիւնները վերցնելու համար հեղինակներուն մէկը բռնելով՝ անոր խօսքովը մէկալին սխալ խօսքը սրբագրելու է , ուստի՝ աւետարանական քարոզչին կ'ըսեմք որ Գործք առաքելոցին խօս

քովը Կալվինին ըսածը թող սրբագրէ. որով
կը ըսածն ալ սրբագրած կ'ըլլայ. քանզի
չեմ յուսար որ Կալվինին վարդապետու-
թիւնը այնքան հաստատ բռնէ, որ Գործք
առաքելոցին խօսքը սրբագրելու և անոր
յարմարցընելու ելլէ։

Բայց թէ որ ըսածին վրայ կենալու ըլ-
լայ նէ՝ կ'աղաչեմ. սա ընելու հարցմունք
ներուս ալ միտ դնէ։ Թէ որ մկրտութիւ-
նը դաւանութեան կնիք մըն է նէ՝ նոր ծը-
նած տղայն դաւանութիւն չունի. անոր
մկրտութիւնը ի՞նչ է։ Արդեօք կ'ըսէ՞ մի
որ՝ տղուն կնքահայրը տղուն փոխանորդու-
թեամբ դաւանութիւն կուտայ. և անոր
վրայ տղան մկրտելով՝ մկրտութիւնը այն
դաւանութեանը կնիքն է։ Բայց թէ որ
քիչ մը բարակ խորհի նէ՝ սա բանիս վրայ
ալ մտածել պէտք է. դաւանութեան կող-
մանէ կնքահայրը փոխանորդ կ'ըլլայ կոր նէ՝
տղուն տեղը կնքահայրը մկրտել ինչու պէտք
չըլլար կոր. որպէս զի նոյն իսկ դաւանու-
թիւնը կնքուած ըլլայ։ Բ. աղէկ և հաստա-
տուն վկայութիւնով կրնայ մի հաստատել
որ նոր ծնած երեխայները մկրտելու հար-
կաւորապէս պէտք եղած անձանց մէկը
կնքահայրն է. անանկ որ՝ մահուան վտանգ
եղած ժամանակը անգամ՝ մկրտողը պատ-
բաստ ըլլալովն ալ կնքահայր մը գտնել հարկ
ըլլայ. և կնքահայրը մինչև դաւանութիւնը
ամբողջ չի զրուցէ նէ՝ տղան չի մկրտըվի։

Աստիկայ չիկրնար գտնալ ոչ եկեղեցական պատմութեանց մէջ՝ և ոչ ժողովքներու կանոններուն մէջ։ Դիոնէսիոս Արիսպագացւոյ գիրքերուն մէջ կնքահօր յիշատակութիւն կայ. ուրիշ հայրապետաց գրքերուն մէջն ալ կը գտնըվի. բայց անոնք հանդիսաւոր մկրտութեան համար ըլլալը բսած ներնուն կարգէն շատ աղէկ կը հասկցվի։ Վտանգի ատեն մկրտութեան համար հանդէս ընելու ժամանակ չի կենալովը՝ մկրտութեան կնքահայր ալ պէտք չէր։ Ուստի հարցմունքս նոյն կը մնայ. նոր ծնած տղայն դաւանութիւն չունի. անոր մկրտութիւնը ի՞նչ է։

Թէ որ ասոնց մկրտութիւն՝ ալ դաւանութեան կնիք է՝ որ ոչ իրենք կրնան ընել այն ժամանակը, և ոչ ալ կնքահօրը ընելը հարկաւոր է խորհրդոյն էութեանը համար, որովհետեւ վտանգի ատեն առանց կնքահայրի ալ մկրտութիւն կ'ըլլայ. և թէ որ այս դաւանութիւնը հաւատքով եղած ատենը պատուական է, և առանց հաւատքի ըլլայ նէ՝ անարգ և անպիտան է. ուրեմն՝ տղայոց քով հաւատքը պակսելով՝ մկրտութիւններն ալ անպիտան կ'ըլլայ. այսինքն՝ ոչինչ։ Նման է նէ՝ եռքը երբ որ մեծնան և խելքնին հասնի և հաւատքի տէր ըլլան նէ՝ պզտիկուց եղած մկրտութիւններն անպիտան ըլլալով նորէն մկրտելու է. և ասիկայ է Նեսպաբդիսդներուն աղանդը։

թէ որ չափահաս մարդ մը մկրտվելու ըլ-
լայ նէ՝ անոր ալ հաւատքը պատուական պի-
տի ընէ մկրտուիր. իսկ թէ առանց հաւատ-
քի ըլլայ նէ՝ անարդ ու անպիտան կ'ըլլայ։
Եւ որովհետեւ մարդոյն միտքը չի գիտցը-
վիր, չափահաս մկրտեալներուն մկրտու-
թեանը վրայ ալ միշտ կասկած պիտի ունե-
նամք. պատուական է մի անպիտան է մի՝
պիտի չգիտնամք։ Այսանկով տղայք հաւատ-
քի բաւականութիւն չունենալովնին՝ մկրը-
տութիւններն ոչինչ. չափահասներուն հա-
ւատքը անյայտ ըլլալուն համար՝ մկրտու-
թիւններն կասկածելի։ Հապա վերի խօսքէն
անմիջապէս հետեւցուցածը ի՞նչ կը նշանա-
կէ. որ ըսեր է թէ՝ "Մկրտութիւնը արտա-
քին նշան է"։ Այս նշանով նշանակված
բանը կ'ուզեմք հասկընալ թէ ի՞նչ է. և
այս նշանը այն բանին կենալո՞ւն նշանն է՝
թէ չի կենալո՞ւն։ Նշան ըսածդ զգալի բան
մը պիտի ըլլայ։ Մտքին մէջը կրած հաւատ-
քին նշանը՝ դաւանութիւնն է, որ հաւա-
տացեալը բերանովը կը խօսի, և հոն գըտ-
նըվողները կը լսեն. և եթէ քանի՞ որ պէտք
ըլլայ նէ՝ այս նշանս կրնայ կրկնել։ Մկրը-
տութիւնը թէպէտ զգալի բան մըն է. բայց
ի՞նչպէս նշան կրնայ ըլլալ որ մարդ չի տես-
ներ՝ մկրտըված ատենը հոն ներկայ գըտնը-
վողներէն զատ. և եթէ պէտք ըլլայ նէ չի
կրկնըվիր։ Արդեօք մկրտութիւնը քրիստո-
նէական հաւատք ունենալուն և դաւա-

նութիւն տուած ըլլալուն նշան դնող քարոզիչը՝ ժամուն դուռը ձգած մէկ անտէրունջ տղայ մը տեսնէ, և տղուն վրայ գրով վկայութիւն մը չի գտնէ մկրտուած ըլլալուն նէ՝ կրնա՞յ մի ճանչնալ որ այն տղան քրիստոնեա՞յ է մի, չէ՞ մի։ Թէ որ մէկ համբ և խուլ մարդ մը տեսնէ նէ՝ անոր քրիստոնեայ ըլլալը կրնա՞յ մի ճանչնալ։ Քրիստոնէութիւնը ճանչնալու սասանկներուն համար մէկ նշան մը կայ, երեսնին խաչակնքելը. այս ալ նորաղանգներուն մէջ խափանեալ է. և խափանված չըլլայ ալ նէ՝ խաչ հանել ըսելը մկրտուիլ ըսել չէ՛. մկրտութեան նշան մը կրնայ ըլլալ. որով տեսնողը կրնայ հասկնալ թէ այն մարդը մկրտուած է։ Մկրտութիւնը ի՞նչպէս նշան կ՚ըլլայ կոր որ չի կրնար ճանչցուիլ. մարդոյն վրայ մնայուն զգալի նշան մը չի ձգեր. և ինքն ալ ուրիշ նշանի կարօտ է. և պէտք եղած ատենն ալ չի կրկնուիր։ Դաւանութեան նշան պիտի ըլլայ. և նշանը՝ նշանակեալ բանէն աւելի գիւրին պիտի ճանչցուի. աւելի յարմար չ՚ըլլար մի ըսելը որ դաւանութիւնն է քրիստոնեական հաւատոց նշանը. չէ՛ թէ մկրտութիւնը. քանզի դաւանութիւնը զգալի է. և մնայուն զգալի բան մը չունի ալ նէ՝ քանի՛ որ պէտք ըլլայ նէ կը նորոգուի. և խօսելու կարողութիւն չունեցող համբերուն համար ալ՝ երեսը խաչակնքելը դաւանութեան տեղը կը բռնէ. և ամէն մար-

դու համար՝ ասիկայ մէկ համառօտ հաւատոյ դաւանութիւն մըն է. քանզի խաչիւ փրկրված ըլլալնիս նշանացի խոստովանիլ է։

Ինանկ ըլլալով՝ մկրտութիւնը ոչ դաւանութեան կնիք է, և ոչ արտաքին նշան ըլլալու բան մը ունի. այլ՝ սկզբնական մեղքէ ազատութիւն (Հռոմ. զ.). Ներգործական մեղքէ ազատութիւն (Գործ. բ. 38). Ստուծոյ որդեգրութիւն (Գաղատ. դ. 26). Քրիստոսի անդամ ըլլալ. (ա. Կորն. զ. 11). Քրիստոս իր վրան հագածի պէս ըլլալով ա նոր հետ միանալ (Գաղ. գ. 27). և ճշմարտապէս և իսկական վերստին ծնունդ (Յովհ. գ). և յաւիտենական կենաց պատճառ (Մարկ. ժզ. 16)։ Զի մկրտուողը Ստուծոյ արքայութիւնը չի կրնար մտնել (Յովհ. գ. 5). և Ստուծոյ արքայութիւնը եկեղեցին է ըսելով՝ առանց եկեղեցին մտնելու յաւիտենական կեանքը ժառանգել յուսալով մկրտութիւնը անպիտան սեպելը վտանգաւոր է։

Բայց մկրտութիւնը դաւանութեան կնիքն է արտաքին նշանն է ըսողները՝ մէկ բանէ մը խաբվեր են. քանզի անանկ կարծիք ըրեր են որ՝ մկրտութիւնը մեղի թլփատութեան տեղը տրվեցաւ. ասոր վրայ ալ հետեւեալ գլուխին մէջը խօսիմք։

ԳԼՈՒԽ Գ.

Մկրտութիւնը Թլփատութեան տեղը տրված չէ։

ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ Թլփատութեան տեղ տրված ջրլալը հասկրցընելու համար առաջ պէտք է այն քննել թէ Թլփատութիւնը իսրայէլացւոց ազգին ի՞նչ բանի համար տրը վեցաւ։ Այս անկէց ետքը պէտք է տեսնել թէ ի՞նչ բանի մէջ Թլփատութիւնը մկրտութեան նմանութիւն ունի. և ո՞ր կողմէն տարբեր և աննման է։

Թլփատութիւնը հոգեւորի չի դպչելով՝ բոլորովին մարմնաւոր մէկ նշան մըն էր իսրայէլացւոց ազգին համար։ Մեղաց թողութիւն մը ո՛չ կրնէր և ո՛չ կը նշանակէր. որովհետեւ Մովսիսական օրինաց մէկ պատուէրն էր, որ Աբրահամու եղած պատուէրը ասով նորոգեցաւ։ Ուստի Թլփատութիւնը միայն մէկ հաւատոյ պատրաստութիւն մըն էր։ Ասուած երբ որ Աբրահամու խոստացաւ աւետեաց զաւակը Քրիստոս անոր ցեղէն աշխարհք խրկելու, "Օրհնեսցին ՚ի քեզ „ամենայն ազգք երկրի„ ըսելով, (Ծն. ԺԲ. 2). որուն միտքը ետքը բացաւ, երբ որ Իսահակ իրեն զոհ ուզելէն ետքը ըսաւ "Ի „զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք „երկրի„ (Գծ. ԻԲ. 18). այն միջոցին էր որ Թլփատութիւնն ալ ապսպրեց. այսինքն՝ խոստմունքէն ետքը՝ և Իսահակայ ծնանել

լէն տարիի մը չափ առաջ։ Տես որ այս պատուէրս ալ ինչպէս կուտայ. “Տաց „քեզ և զաւակի քում զերկիրս զայս... և „եղէց Նոցա Յաստուած։ Բայց դու զուխտ „իմ պահեսցես. և զաւակ քո յետ քո յաղ„գըս իւրեանց. Թլփատեսցի ձեր ամենայն „արու... և մանուկ ութօրեայ Թլփատեսցի „ձեր, ամենայն արու յազգս ձեր... և եղիցի „ուխտ իմ 'ի վերայ մարմնոյ ձերոյ յուխտ „յաւիտենական „ (Ծն. ԺԷ. 8=12)։

Երբ որ Աստուած Աբրահամու խոստացաւ որ քու զաւակներդ երկինքի աստղերու պէս և ծովու աւազի պէս համրանքի պիտի չիգան, թէպէտ Աբրահամ շատոնց կարգըված էր և տղայ չունէր, և յոյս ալ չունէր որ իրեն տղայ կ'ըլլայ, բայց Աստուծոյ խօսքին հաւատաց. և հաւատալը արդարութիւն սեպվեցաւ։ Պօղոս առաքեալ կը հարցընէ ասոր վրայ. “Ասեմք եթէ հա„մարեցան Աբրահամու հաւատքն յարդա„րութի։ Արդ զիա՞րդ համարեցան. մինչդեռ „'ի Թլփատութե՞ան էր եթէ յանթլփա„տութեան. ո՛չ 'ի Թլփատութեանն՝ այլ „յանթլփատութեանն. և նշանակառ զԹլփ„փատութիւնն, կնիք արդարութեան հա„ւատոց՝ որ յանթլփատութենէ անտի „ (Հռոմ. դ. 9=11)։ Ա՛հա Թլփատութեան և մկրտութեան առաջին տարբերութիւն իրարմէ։ Պօղոս առաքեալ Թլփատութեան համար նշանակ և կնիք արդարութեան, հա-

ւատոց կ'ըսէ. մկրտութեան համար ոչ Պօ-
ղոս, ոչ Պետրոս, ոչ Քրիստոս և ոչ առա-
քեալներուն մէկն ալ՝ ոչ նշանակ ըսած ու-
նին և ոչ կնիք. և չի կրնայ ըսվելուն ալ
պատճառը երկրորդ գլուխին վերջը խօսե-
ցանք։ Բայց աւետարանական քարոզու-
թիւններուն հեղինակը մէկ անգամ մը միա-
քը դրեր է որ՝ մկրտութիւնը թլփատու-
թեան տեղը տրվեցաւ. և տեսնելով որ
Պօղոս առաքեալ թլփատութեան համար
նշանակ և կնիք արդարութեան հաւատոց
ըսեր է, ինքն ալ նոյն բառերը անոր տեղը
կը բռնէ կարծած խորհրդոյն յարմարցընե-
լով՝ մկրտութիւնը կնիք մըն է դաւանու-
թեան, և արտաքին նշան է ըսեր է։ Այն
չէ՛ նայեր որ՝ թլփատութիւնը մէկ ըդդալի
մնայուն նշան մը ըլլալով ալ մկրտութեան
չի նմանիր, ինչպէս որ ըսինք. ասոր նշան
կրնայ ըսվիլ, մկրտութեան չըսվիր։

Հին օրինաց մէջ ի՛նչ արարողութիւն-
ներ կային նէ՝ պարապ բաներ էին մարդիկ
արդարացընելու կոչմանէ. միայն մէկ ա-
ւետիս մը կը գուշակէին՝ որ պիտի արդա-
րացուցիչը գայ։ Այսիկայ գեղեցիկ կը բա-
ցատրէ Պօղոս առաքեալը. "Փակեցին գիրք
„զամենեսին ընդ մեղաւ „. այսինքն՝ օրինաց
գիրքը մարդիկ մեղաց մէջ գոցեցին. օրէնք
չեղած տեղը մեղք չըլլալուն համար։ „Օ՛յ
„աւետիքն 'ի հաւատոց անտի Յիսուսի
„Քրիստոսի տացին հաւատացելոց։ Մինչև

„հաւատքն եկեալ էին, ընդ օրինաց փա-
„կեալ պահէաք 'ի հանդերձեալ հաւատն
„որ յայտնելոց էին 'ի մեզ։ Այս օրէնքն
„դաստիարակք եղեն մեզ 'ի Քրիստոս Յի-
„սուս, զի 'ի հաւատոցն արդարասցուք „։
(Գաղ. գ. 22=24)։ Հաւատքին տիրելն ալ
ինչպէս ըլլալը երկու տուն վարը կը բացատ-
րէ թէ մկրտութեամբ է. (Գործ. 27)։ Ու
մկրտութիւնը ազգաց խտիրը՝ վերցուց. որ
թլփատութիւնը այսպէս խտիր մը հաստա-
տելու համար որոշված էր. անանկ որ հա-
ւատացեալները մկրտվելով՝ Քրիստոսի ե-
ղան. և Քրիստոսի ըլլալով՝ աբրահամու
զաւակ ալ եղան. և աւետեաց կողմէն ժա-
ռանգ ալ եղան։

Այս կողմէն կրնանք ըսել՝ թէ մկրտու-
թիւնը թլփատութեան տեղը տրբվեցաւ. ինչպ
որ կրնանք ըսել թէ՝ ստուերին տեղը լոյս
ծագեց. անկատարին տեղը կատարեալը ե-
կաւ. օրինակին տեղը ճշմարտութիւնը ան-
ցաւ։ Այսոր պէս կ'ըսենք որ՝ զատկական
գառին տեղը Քրիստոս գենաւ. թէպէտ ի-
րարու բնաւ մէկ յարմարութիւն մը չունին
արդարացուցիչ զօրութեան կողմանէ. այլ
միայն մէկ օրինակ մին էր, որ տարվէ տա-
րի յիշատակը նորոգելու համար կ'ըլլար։ Այս
մտքով՝ մկրաութիւնը թլփատութեան տե-
ղը անցաւ ըսելը սխալ չէ. բայց ասկէց մա-
կաբերելով՝ թլփատութեան յատկութիւն-
ները մկրտութեան տալը, և անիկայ ի՛նչ

էր նէ այս ալ այն է ըսելը մեծ սխալ է։ Ա-
սոր պէս է երբ որ մէկը ըսէ որ՝ գիշերվան
մութին տեղը արեւուն լոյսը ճառագայթեց.
և ասկէց հետեւցընէ որ՝ անանկ է նէ՝ ինչ-
պէս որ գիշերը ճրագ կը վառէի, անանկ ալ
պէտք է որ ցերեկին ճրագ վառեմ. այս հե-
տեւութիւնս սխալ է։ Բայց աւետարանա-
կան քարոզութեանց հեղինակին ըսածը ա-
սոր պէս է. որ կ'ըսէ։

"Ակրտութիւնը դուռ մըն է, ուսկից կը
„մտնամք Քրիստոսի եկեղեցին երկրիս վը-
„րայ. ու Թլփատութեան տեղը տրված է
„մեզի, որ էր հրէից եկեղեցին մտնալու
„դուռը„։ Այս տեղս ըսածը ակրտութեան
համար շատակ է. թէպէտ երկրի՝ վրայ բառե-
րը յատկապէս դրած է ուժը կոտրելու հա-
մար. բայց մեզի համար որ երկրիս վրայի եկե-
ղեցին մտնելը իբրև յաւիտենական փառաց
ժառանգ ըլլալու իրաւունք մը կը բռնեմք,
և եկեղեցւոյ այս դռնէն ներս չի մտնողը այն
փառացը ժառանգուէն կը զրկվի կ'ըսեմք,
այդ յաւելուածով բանին զօրութիւնը չի
տկարանար։ Ուստի կ'ըսեմք. ակրտութիւնը
եկեղեցին մտնելու դուռ մըն էր այս երկ-
րիս վրայ՝ ամէն ակրտվողներուն համար
ընդհանրապէս. բայց Թլփատութե դուռ
ըլլալը ասանկ ընդհանուր չէր։ Չի Թլփատ-
վածներ կային՝ որ հրէական եկեղեցւոյ ան-
դամ էին. ինչպէս են հրէից կնիկ մարդիկը, և ուրիշներն պզտիկ տղայքը՝ որ

Թլփատված չէին։ Թլփատվածներ ալ կա-
յին՝ որ հրէական եկեղեցիէն դուրս էին. ինչպէս են անոնք՝ որ Երեմիա մարգարէն կը համբէ։ «Ահա աւուրք եկեսցեն ասէ
„տէր, և արարիցուք ընդ ի վերայ ամենայն
„Թլփատելոց յանթլփատութեան իւրեանց։
„Ի վերայ Եգիպտոսի և ի վերայ Յուդայ և
„ի վերայ Եդոմայ և ի վերայ որդւոցն Ա-
„մմնայ և ի վերայ որդւոցն Մովաբու և ի
„վերայ ամենայն յապաւելոցն զերեսօք բը-
„նակչաց անապատի „ (Երեմ. Թ. 25. 26.)։
Ասոնց սմէնն ալ՝ (գուցէ Եգիպտացիներէն զատ. քանզի ասոնց վրայ երկու կերպ կարծիք կայ. ոմանք կ'ըսեն թէ ասոնց թլփատութիւնը աբրահամէն հին է. և ուրիշները՝ թէ ետքը իսրայէլացիներէն սորվեցան). Եդոմայեցիները որ Իսահակայ Եսաւ տղուն ցեղէն են, և Ամմնացիները և Մովաբացիները՝ որ Աբրահամու եղբօրը տղուն ցեղէն են. և անապատին բնակիչները՝ որ Աբրահամու Պետուրա կնոջմէն եղած տղոցը ցեղէն են, ասոնք ամէնն ալ թլփատած էին. և Յուդայի պէս թլփատած. քանզի ասոնց թլփատութիւնն ալ Աբրահամու տրուած պատուէրին կատարումն էր. բայց Յուդայի ցեղէն զատ մէկն ալ այն ատենվան Երիքովայի եկեղեցւոյ մէջ չի սեպվեցան. անանկ է նէ՝ թլփատութիւնը հրէից եկեղեցին մտնելու դուռ չէր։ Հանած հետեւութիւնը շարունակեմք։

"Բայց հազարաւոր անձինք մտան հրէ-
„ից եկեղեցին թլփատութեան դռնէն, ո-
„րոնք ճշմարիտ իսրայէլացի չէին։ Ու հա-
„զարաւոր կը մտնեն Քրիստոսի եկեղեցին
„մկրտութեան դռնէն, որոնք Քրիստոսինը
„չեն՝ ու բնաւ սրտանց չեն հաւատար իրեն.
„բնաւ չեն զղջար մեղքերնուն, բնաւ ար-
„դարացած՝ նորոգուած՝ որդեգրութեան
„ընդունված ու սրբացած և փրկված չեն։

Այս խօսքիս մէջ քննութեան կարօտ
քանի մը բան կայ։ Նախ՝ ըսելը թէ հա-
զարաւոր անձինք մտան հրէից եկեղեցին
թլփատութեան դռնէն. որոնք ճշմարիտ
իսրայէլացի չէին։ Թլփատութիւնը մարմ-
նաւոր մէկ նշան մըն էր. ճշմարիտ իսրայէ-
լացի ըսելը՝ հաւատացեալ ըսել է. հա-
ւատքը թլփատութիւնէն առաջ է ըսաւ
առաքեալը՝ Աբրահամու վրայ խօսելով.
ինչպէս որ վերը տեսանք։ Թլփատութիւնը
ըստ մարմնոյ իսրայէլներուն յատուկ էր,
որ իսրայէլացիները ուրիշ ազգերէն զատե-
լու համար տրուած էր. և ամ որ կը թըլ-
փատուէր նէ՝ ըստ մարմնոյ ճշմարիտ իսրայէ-
լացի կ'ըլլար, իսրայէլացւոց եկեղեցին մըտ-
նելով. բայց հաւատքը զատ էր։ Անանկ պէտք
է հասկընալ՝ որ իսրայէլացւոց ազգը ուրիշ
ազգերէն արտաքին բանով մը որոշված ըլ-
լալուն համար զատ մէկ եկեղեցի մըն էր.
և այն որոշված և ընտրեալ ազգին մէջ
մարգարէները պակաս չըլլալով՝ և սուրբ

գիրքը անոնց տրված ըլլալով՝ հաւատոյ
շարունակութիւնը զգալի կերպով այն աղ-
գին մէջը կը տեսնուէր։ Բայց այն ատենվան
համար չի գիտեմք որ չի թլփատվողը փրկու-
թեան ճամբան մոռած չէր ըլլար։ Վերը ը-
սինք որ՝ իսրայէլացիներէն զատ՝ Աբրահա-
մայ ցեղէն եղողները թլփատված էին. իս-
մայէլացիք, եդոմացիք, ամոնացիք և մովա-
բացիք. բայց ատոնց համար ըսող ջրլար որ
թլփատութեամբ իսրայէլացւոց եկեղեցին
մրտած կ'ըլլային։ Իւ այն ատենը Աստուծոյ
եկեղեցին իսրայէլացիներուն եկեղեցին էր։
Սակայն Յովբայ համար ի՞նչ ըսենք. թլ-
փատված ըլլալուն համար մի հաւատացե-
լոց կարգն էր. որ սուրբ գիրքը յատկապէս
աստուածապաշտ կ'ըսէ անոր։ Թէ որ ասոր
համար էր նէ՝ ուրիշ եդոմայեցիները ազ-
գովին հին եկեղեցւոյ զաւակներն են ինչու
չենք ըսեր։ Նէէման ասորին՝ որ անթլփատ
էր, Յորդանէ մարգարէին հրաշքը առողջա-
ցաւ նէ՝ ճշմարտին Աստուծոյ հաւատաց
ըսելով. "Ահա գիտացի թէ ոչ գոյ Աստ-
„ուած յամենայն երկրի՝ բայց միայն 'ի մէջ
„իսրայէլ„ (գ. Թագ. ե. 15)։ Խօսք տուաւ
որ՝ միայն ճշմարտին Աստուծոյ զոհէ. կուռ-
քերուն չի զոհէ. անոր համար երկու ջորիի
բեռ ալ հրէաստանի հողէն հող ուզեց, որ
երթայ անոնց վրայ Աստուծոյ երկրպագու-
թիւն ընէ։ "Տացին ծառայի քումդ բեռունք
„զուգից ջորւոյ 'ի հողոյ երկրիս. զի ոչ ևս

„արասցէ ծառայքս ողջակէզս և զոհս ապ-
„տուծոց օտարաց, բայց միայն Տեառն „
(Ելք. 17)։ Ճշմարիտ հաւատացեալ ըլլա-
լու ասկէց եւթ ինչ կ'ուզեր։ Բայց Եղիսէ
ասոր դուռ չի ցրցուց Ճշմարիտ իսրայէլացի
ըլլալու. չըսաւ որ Թլփատվէ։ Նմանապէս
Յովնան նինուէացիներուն քարոզեց որ ա-
պաշխարեն. չըսաւ որ Թլփատվին։ Դանիէլ
մարգարէն տեսաւ որ Նաբուգոդոնոսոր
զԱստուած ճանչցաւ. բայց չըսաւ որ Թլլ-
փատվի։ Հին օրինաց ատենը Թլփատու-
թեան քարոզիչ՝ սուրբ գրոց մէջ լսված
բան չէ։ Ուրիշ ազգէ հրեայ ընելու համար
նախանձաւորութիւնը՝ Թլփատոսի մօտ ժա-
մանակները մտաւ հրեայներուն մէջ. և մի-
այն իրենց ազգին խառնվել ուզողները կը
Թլփատվէին։ Ընթլփատ մարդու հետ խնա-
մութիւն ընել աղջիկ տալը շատ հին ժամա-
նակէ 'ի վեր արգելված էր իսրայէլացւոց.
և Մովսէսի օրերէն շատ առաջ՝ Յակովը նա-
հապետին աղջիկը երբ որ Սիւքէմ առնել
ուզեց և աղջկանը եղբայրներուն հետ խօ-
սեցաւ, ասոնք պատասխան տուին թէ՝ "Ա-
„կարելի առնել զայդ բան, տալ զքոյր մեր
„առն անթլփատի, քանզի նախատինք են
„մեզ „։ Եւ առաջարկեցին որ Թլփատվին։
Ընոնք ալ իրենց քաղաքը եկան, և խոր-
հուրդ ըրին վճռեցին որ՝ Թլփատվին. որ և-
բարու նման մէկ ազգ մը ըլլան. և իրարու
աղջիկ առնել տալու կարող ըլլան։ "Ա յսու

„նմանեսցեն մեզ որեարն՝ բնակելընդ մեզ „լինել ազգ մի. ՝ի թլփատել մեզ զամենայն “արու, որպէս նոքայն թլփատեալ են „։ (Ծն. ԺԴ. 14. 22.)։ Եւ այս բաներէս կը տեսնես որ՝ հին օրինաց ատենը թլփատութիւնը հաւատքի դուռ չէր։ Եւ ասոր վրայ այս ալ դիտելու արժանի է որ՝ բնաւ մէկ տեղ մը գրված չկայ հին օրինաց մէջ՝ թէ հաւատքի եկող մարդը թլփատեցէք։ Նոր օրինաց մէջ յատուկ պատուէր կայ մը կրրտելու։ Անանկ է նէ՝ մէկը եկեղեցին մտնելու ճշմարտապէս մէկ հատիկ դուռ է. մէկալը՝ ըստ մարմնոյ իսրայէլացւոց ազգին հետ միանալու դուռ մըն է։

Երկրորդ քննելիքը այս է։ Թլփատութիւն իսրայէլացւոց մէջ մտնողները ճշմարիտ իսրայէլացի չէին կրնար ըլլալ ամէնն ալ. ըսել է որ՝ չէին կրնար արդարանալ։ Ձենք կրնար ըսել որ՝ մկրտութեամբ Քրիստոսի եկեղեցին մտնողները ամէնն ալ քրիստոնեայ չեն կրնար ըլլալ։ Գիտնալ և աղէկ միտք առնել պէտք է որ՝ քրիստոնեայ ըլլալն ու քրիստոնէի արժան կեանք վարելը ուրիշ բաներ են. իրարմէ շատ տարբերութիւն ունին։ Ինչպէս որ բոլորովին արտէն դուրս ըլլալն ու՝ արտին մէջ ըլլալով միասակար բոյս ըլլալը իրարմէ տարբերութիւն ունին։ Քրիստոս իւր Եկեղեցիին արքայութիւն ասպուծոյ ըսելով ծովը նետված ուռկանի կը նմանցընէ. որուն մէջ ամէն

տեսակ ծովային կենդանիներ կը մտնեն։ Անոնք զատելը՝ 'ի կոպարծի աշխարհի պիտի ըլլայ. անանկ է նէ՝ այս աշխարհքիս մէջ խառն են. անանկ է նէ՝ ասոնք ալ քրիստոնեայ են։ Մէկ մարդու մը գործքերուն նայելով մարդ չէս ըսվի նէ՝ գործքը մարդութեան աստիճանին և մարդկային խելքի և խոհեմութեան գործ չէ՛ ըսել է։ Այս զրուցվածքէն պատճառ առնելով չեմք կրնար ըսել թէ՝ ինչպէս որ մէկ կենդանի մը երկու ոտք ունենալը բաւական չէ՛ որ մարդ ըլլայ. քանզի թռչունները և հաւերը ալ երկերկու ոտք ունին, ասոր պէս խելք և դատումն և բանականութիւն ունենալն ալ հերիք չէ՛ մարդ ըլլալու. այլ պէտք է որ մարդութեան վայել աղէկութիւնները 'ի գործ դնէ։ Եւ ասոր չի զրուցվելուն պատճառը բաղդատութեան անյարմար ըլլալն է։ Երկու ոտք ունենալը մարդոց անանկ յատուկ չէ՛ որ ուրիշ կենդանի չի գտնըվի երկու ոտքով։ Այց բանականութիւնը մարդոյս անանկ յատուկ է որ՝ բնաւ մէկ կենդանի մը չի կայ որ բանական ըլլայ և մարդ չըլլայ. թէպէտ բանականութեանը սորվեցուցածովը չերթար. անասուններու պէս իրեն զգայական կիրքին կը հետեւի. և կ'ըլլայ գէշ մարդ. անասունի պէս մարդ մը։ Ասոր պէս աւետարանական քարոզչին բաղդատութիւնն ալ անյարմար է։ Թլփատութիւնը հաւատացելոց անանկ

յատուկ նշան մը չէր որ թլփատեալ կըռա-
պաշտ ուրիշ ազգ չի գտնըվէր. քանզի թըլ-
փատեալ էին Իսմայէլեանք. Ամենացիք. Մո-
վաբացիք. Էդոմայեցիք. Մկրտութիւնը Քը-
րիստոնէի յատուկ է. անանկ որ՝ մարդ չի կայ
որ մկրտեալ ըլլայ և քրիստոնեայ չըլլայ։ Ա-
սոնց մէջ Քրիստոս և քրիստոնէութիւնը ու-
րացողներ ալ կան. բայց ուրանալին խեր
չուներ. տակաւին քրիստոնեայ են. և նըշա-
նը այն է որ՝ երբ որ զղջան և ուրացած հա-
ւատքնին խոստովանին նէ՝ նորէն մկրտել
չըլլար. ըսել է որ՝ քրիստոնէութիւնը վերա-
ներնուն ջընջըված չէ։ Այս այսպէս ըլլալէն
ետքը՝ վարքին խօսքը բնաւ չըլլար. քրիս-
տոնեայ մը կրնայ իրեն խոստովանած հա-
ւատքին անվայել գործքերու մէջ գտնըվիլ.
բայց տակաւին քրիստոնեայ է. թէպէտ չար
քրիստոնեայ է. անհաւատի նման քրիստոն-
եայ մըն է։ Պօղոս առաքեալ Կորնթացիներ-
ուն խրատ կը գրէր՝ որ պոռնիկներուն հետ
անխտիր տեսութիւն չունեն։ Բայց որովհե-
տեւ կրնային միտքը ծուռ հասկընալ և ընդ-
հանուրի տանիլ՝ ըսուն իր միտքը հասկրցընե-
լով կ'ըսէ. ձեզի գրեցի որ պոռնիկ մարդոց
հետ չի խառնըվիք. բայց այս աշխարհքիս
պոռնիկներուն կամ ագահներուն կամ յա-
փրշտակողներուն կամ կռապաշտներուն հա-
մար չըսի. չէ՛ նէ՝ բոլորովին աշխարհքէս ալ
դուրս ելլելու կ'ըլլայիք։ Անանկ է նէ ա-
ռաքեալը ասանկ մոլի մարդոց երկու տե-

սակը կը ճանչնայ եղեր. և մէկ տեսակը այս աշխարհքիս գեղերն են։ Մէկալ տեսակը ոչն է։ Իմայ կ'ըսէ ձեզի չի խառնըվիլ ըսի նէ՝ թէ որ եղբայր ըսվողներուն մէկը պոռնիկ կամ կռապաշտ կամ ագահ կամ բամբասող կամ գինով կամ յափշտակող ըլլայ նէ՝ անոր հետ հաց ուտել անգամ պէտք չէ։ Անանկ է նէ՝ եղբայր ըսվածներուն մէջ կռապաշտ անգամ կըգըտնըվի եղեր. անանկ է նէ՝ հաւատացելոց եղբայր ընելու անանկ մէկ բան մը կայ եղեր որ՝ հաւատքի ալ շատ կապված չէ. մարդ այս կողմանէ բան մը չեղած՝ այն բանը ինքնին իր գործը կը կատարէ. որ է աստուածաբաններուն 'ի գործոյ գործեցելոյ ըսածը։ Անանկ կռապաշտութիւն պէս հաւատքի հակառակ բան չի կրնար ըլլալ. և այն ալ եղբայր անուանեալներուն մէջ կը գտնըվի. և անանկով ալ տակաւին եղբայր է. քանզի եկեղեցւոյ մէջ գըտնըված է, դըրսէն չէ՝. և առաքեալը ասոր համար ասանկներուն դէմ վճիռ կուտայ. քանզի կ'ըսէ. դուրսինները դատելու ինձի՞ ինչ. չէ՞ մի որ դուք ներսինները կը դատէք. դուրսիններն ալ Աստուած թող դատէ։ "Արեցի ձեզ 'ի թղթի այդր չխառնակել „ընդ պոռնիկս։ Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս „աշխարհիս այսորիկ. կամ ընդ ագահս կամ „ընդ յափշտակողս կամ ընդ կռապարիշտս. „ապա թէ ոչ՝ պարտ էիք և յաշխարհէ իսկ ե„լանել։ Այլ արդ՝ գրեցի ձեզ չխառնակել.

„եթէ ոք եղբայր անուանեալ կամ պոռնիկ
„լցէ կամ կռապարիշտ կամ ագահ կամ բամ-
„բասող կամ արբեցող կամ յափշտակող, ընդ
„այնպիսումն և հաց մի՛ ուտել։ Օ՛ի կայ իմ
„և զարտաքինսն դատելոյ. ո՞չ ապաքէն դուք
„զներքինսն դատիցիք, և զարտաքինսն Աստ-
„տուած դատիցի „ (ա. Կորն. ե. 9=13)։

Հրրորդ քննելիքնիս այս է։ Աւետարա-
նական քարոզիչին ըսած խօսքերը հարևան-
ցի մը կարդալով՝ կարդացողին միտքը անանկ
կուգայ որ՝ քրիստոնեայքը բարեպաշտուե
և բարեգործութեան յորդորելու համար
անանկ կը խօսի. բայց աղէկ մը քննելի նէ՝
տակէն ուրիշ բան կ'ելլէ։ Անկրտեալ քրիս-
տոնեայներուն ըլլալու խրատը անանկ պի-
տի ըլլայ որ՝ մկրտութեամբ առած շնորհ-
քը յարգել և բանեցընել սորվի. և ասիկայ
էր առաքելոց բռնած ճամբան։ Հռոմա-
յեցւոց գրելով՝ մկրտութեան ինչ ըլլալը
կը հասկըցընէ Պօղոս առաքեալը, որ Քրիս-
տոսի խաչակից ըլլալ և անոր պէս մեռնիլ
ըսել է. և ասկէց դեղեցիկ խրատ կը հե-
տեւցընէ. ինչպէս որ կ'ըսէ Քրիստոս մեռ-
նելէն ետքը յարութիւն առաւ, և անկէց
ետքը ալ մեռնելիք չունի. անոր պէս դուք
ալ ձեզ մեղքի նայելով մեռած սեպեցէ՛ք.
և Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ կեն-
դանի սեպեցէ՛ք։ Ասկէց ետքը չըլլայ որ ձեր
մահկանացու մարմնոյն ցանկութիւններուն
հնազանդիք, որ մեղքը ձեր վրայ չի տիրէ։

"Քրիստոս յարուցեալ է 'ի մեռելոց. այ-
„սուհետեւ ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս
„տիրէ ... : Նոյնպէս և դուք համարեսջիք
„զանձինս մեռեալս մեղացն, և կենդանիս
„Աստուծոյ 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր
„մեր : Մի՛ այսուհետեւ թագաւորեսցեն
„մեղք 'ի մահկանացու մարմինս ձեր, հնա-
„զանդել ցանկութեանց նորա „ (Հռոմ. զ.
9. 11. 12) : Եւ քիչ մը ետքը Աստուծոյ
փառք կուտայ՝ որ առաջ մեղաց ծառայ է-
ին, ետքը ազատվեցան. և ասոր վրայ կ'ըսէ.
հիմա որ մեղքէն ազատվեցաք նէ՝ արդա-
րութեան ծառայ եղէք : "Արդ՝ ազատեալք
„'ի մեղաց՝ ծառայեցէ՛ք արդարութեանն „
(Հռոմ. 18) : Նոյն առաքեալը Կորնթացիներ-
ուն գրելով կ'ըսէ. դուք Աստուծոյ տա-
ճար էք. Աստուծոյ հոգին ձեր մէջը բնա-
կած է : Թէ որ մէկը Աստուծոյ տաճարը
աւրէ նէ՝ Աստուած ալանիկայ կ'աւրէ. քան-
զի Աստուծոյ տաճարը սո՛ւրբ է. որ դուք
էք : "Տաճար էք Աստուծոյ, և հոգի Աստու-
„ծոյ բնակեալ է 'ի ձեզ : Եթէ ոք զտաճար
„Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա
„Աստուած : Զի տաճար Աստուծոյ սո՛ւրբ
„է. որ էք դուք „ (ա. Կորն. գ. 16. 17.)
Թէ՛ առաքելոց և թէ՛ եկեղեցւոյ հայրապե-
տաց խօսքերը ասանկ օրինակներով լեցուն
ըլլալով՝ անօգուտ կը սեպեմք այս տեղ ա-
ւելի երկնցընել : Բայց աւետարանական
քարոզին խօսքերուն մէջը անանկ բան մը

չի տեսնելով՝ կրնայ մէկը կարծել թէ՝ արդեօք ի՛նչ ըսել կ'ուզէ. քրիստոնէութիւնը բարբի՞հետ մի կապած է. անանկ որ՝ մէկ քրիստոնեայ մը մեղք մըտնելուն պէս քրիստոնէութէն կ'ելնայ։ Այս կարծիքը ջրելու մէկ խօսք մըն ալ չենք կրնար գրտնել այնքան խօսքերուն մէջ։ Բ։ այս կարծիքիս անմիջական հետեւութիւնն է որ՝ անանկ է նէ մէկ մեղաւոր մը դարձի գալու ըլլայ նէ՝ նորէն մկրտելու է։ Բայց քարոզիչը անոր վրայ յայտնի խօսքով կը խօսի. "Քրիստոս „Յիսուսով ոչ թլփատութիւնը բան մըն է „ (կ'ըսէ առաքեալը), ոչ ալ անթլփատու„թիւնը. հապա նոր ստեղծուած ըլլալն է „բանը „ (Գաղ. գ. 15)։ Ինչպէս ոչ մը„կրտութիւնն է բանը՝ որ թլփատութեան „տեղը ընդունելիք. այլ նոր ստեղծուած „ըլլալը՝ Հոգւով սրբով վերստին ծնանիլը „։ Ի՞սել կ'ուզէ որ՝ մկրտութիւն եղեր չէ՛ եղեր՝ հոգ չէ՛. Հոգւով սրբով վերստին ծընանելու է։

Բայց ասով ալ միտքը ի՞նչ ըսել է, շատ աղէկ չի հասկցվիր։ Այսոր պէս զրուցվածք մըն ալ սա կրնայ ըլլալ. մարդ ըլլալը չէ՛ բանը, այլ կենդանի բանական ըլլալու է։ Ի՞սել է որ՝ մէկը մինչև որ կենդանի բանական չըլլայ նէ՝ մարդ ըլլալը իրեն խեր չունի։ Բայց իրաւունք ունիմք ասանկ ըսողին հարցնելու՝ թէ ի՞նչ ըսել կ'ուզէ. ի՞նչպէս հասկընամք այս խօսքը։ Մարդ ըսելն ու կեն-

դանի բանական ըսելը մի և նոյն բան չէ՞ մի. և ի՞նչպէս առանց կենդանի բանական ըլլալու մարդ կ՚ըլլայ. և ի՞նչպէս առանց մարդ ըլլալու կենդանի բանական կ՚ըլլայ։ Այնմանապէս՝ մէկ մարդ մը առանց մկրտուելու ի՞նչպէս Յիսուսոյի եկեղեցին կը մտնէ մկրտութեան դռնէն. Եւ ի՞նչպէս կրնանք ըսել թէ՝ ոչ մկրտութիւնն է բանը։ Գլխաւոր բանը մկրտութիւն է. քանզի ընտրութիւնը և կոչումը անոր վրայ է. և քրիստոնէից այն պէտք է որ՝ այս ընտրութիւնը և կոչումը բարեգործութեամբ հաստատեն. ինչպէս որ Պետրոս առաքեալ կը խրատէ. "Եղբարք՝ առաւել փութացէք, „զի բարեացն գործովք հաստատուն զձեր „կոչումն և զընտրութիւն պահիցէք „ (բ. Պետր. ա. 10)։ Այն պէտք է որ՝ աւազանին լուացմամբ մէկ անգամ մը սրբբուելէն ետքը՝ լուացված խոզի պէս նորէն տղմին մէջ չի թաղտրուիր։ Մկրտեալ մարդը միայն մկրտութեան զօրութեամբ Աստուածային փառացը չի հասնիր. թէ՛ և նոյն փառացը օրինաւոր ժառանգ է. բայց ժառանգութեանը հասնելու համար քրիստոնէին ապրելիք գործքերը պէտք է ընել։ Թէ որ չընէ նէ՝ Պետրոս առաքեալը կ՚ըսէ որ՝ աւանոնց վերջը առաջինէն գէշ կ՚ըլլայ. և աւելի աղէկ էր անոնց բնաւ քրիստոնէական ճշմարտութիւնները չի ճանչնալը, քան թէ ճանչնալ և ետ կենալը։ " Օ՛ի եթէ փա„խուցեալք ի պղծութեանց աշխարհի, գի-

„տուԹեամբ տեառն մերոյ և փրկչին Յի-
„սուսի Քրիստոսի, և դարձեալ ընդ նոյ-
„նըս շաղեալք պատիցին, եղիցի նոցա վախ-
„ճանն չար քան զառաջինն։ Զի լաւ էր նո-
„ցա՝ եԹէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զար-
„դարուԹեանն ճանապարհ, քան զի ծան-
„եան և յետոյ կացին 'ի սուրբ պատուիրա-
„նէն որ նոցա աւանդեցաւ „ (Պետ. բ.
20. 21)։

Աւետարանական քարոզիչը ասանկ բա-
ներու վրայ բնաւ չի խօսիր. և մէկ նմանապէս
բառով մը՝ մկրտուԹիւնն ու Թլփատուիր
իրարու նման կը բռնէ. և այս նմանապէսին
տակէն ի՞նչ պիտի հանէ, երբ որ մէկը ըսէ
Թէ, ինչպէս որ Թլփատվող մարդուն Քրիս-
տոս չօգներ. "ԵԹէ Թլփատիք, Քրիստոս
„ինչ ձեզ ոչ օգնէ „ (Գաղատ. է. 2).
Նմանապէս մկրտվող մարդուն ալ Քրիստոս
չօգներ։ Կ'ըսէ որ՝ մկրտուԹիւնը բան չէ՛,
նոր ստեղծուած ըլլալը և Հոգւով սրբվով
վերստին ծնանիլն է բանը։ Կ'ըսէ որ մկրտու-
Թեան դռնէն շատ մարդ Քրիստոսի եկեղե-
ցին կը մտնեն, որոնք Քրիստոսինը չեն. բնաւ
չեն զրաղար մեղքերնուն. և այլն։ Ինանկ է
նէ՝ ինչպէս որ Թլփատվողը Թլփատուէ հետ
կապված օրէնքները պահելու կը պարտա-
ւորէր, նմանապէս մկրտվողն ալ մկրտու-
Թեան հետ կապված օրէնքները պահելու
է։ Այս կողմէն նմանապէսը օրինաւոր է։
Բայց Թէ որ հակառակորդը այս նմանապէսը

ուրիշ կերպ դարձընէ և ըսէ. „Խափանեալ „էք ի Քրիստոսէ՝ որ օրինօքն արդարա„նայք „ (Գաղ. 4). Նմանապէս մկրտութեան հետ կապված օրէնքովը արդարանալ ուզողը՝ Քրիստոսէ խափանեալ է։ Այս նմանապէսը դէշ է. բայց վերի նմանապէսին հետեւութիւնն է։

Բայց ուղղափառ եկեղեցւոյ դաւանութիւնը այս է։ Մէկ մարդ մը սրտիւ Քրիստոսի հաւատայ, և աւետարանական պատուիրանքները ամէնն ալ պահէ, մինչև որ մկրտութեամբ եկեղեցւոյ մէջ մտնելով Աստուծոյ ժառանգ և Քրիստոսի ժառանգակից չըլլայ նէ, Քրիստոսի արեամբը մեզի համար ստացված յաւիտենական փառացը չի կրնար արժանի ըլլալ. ոչ անոր հաւատքը անոր խեր կ'ընէ՝ և ոչ աւետարանի պատուիրանացը համեմատ գործ գործելը։

Սրտիւ չի հաւատացող մարդն ալ՝ թէ՛ կեղծաւորութեամբ և թէ՛ ուրիշ մտօք խորհրդական մկրտութիւնը ընդունի նէ՝ Քրիստոսի եկեղեցւոյն անդամ կ'ըլլայ նոյն մկրտութեամբը. բայց իր կողմանէն՝ Քրիստոսի անդամ ըլլալուն հետ կապված հոգեւոր աղէկութենէն հրաժարված կ'ըլլայ. և աւելի մեղապարտ կ'ըլլայ, քան չի մկրտվող անհաւատը։ Այս երբ որ հաւատալ ըսկսի նէ՝ չի հաւատացած ատենը առած մկրտութիւնը ոչինչ սեպելով նորէն չի մկրտվիր։

Չի մկրտված անմեղ երախայքը անդամ Աստուածային փառաց հասնելիք չունին. որովհետեւ մեղաց մէջ ծնած են. ըստ կրոնական մեղքը վրանին կայ. և մկրտութիւնն է որ անոնք սկզբնական մեղքէն կ'ազատէ։

Չափահաս մարդ մը անհաւատութենէ քրիստոնեայ ըլլալու ցանկայ, և մկրտութեան հարկաւոր ըլլալը ճանչնալով մկրտութիւնը ընդունելու և Քրիստոսի հետ այս խորհրդոյս միջնորդութեամբը միանալու սրտանց փափաքի, բայց ժամանակ չունենայ. և մկրտութեան հասնելէն առաջ զինքը մեռցընեն, իր արիւնովը մկրտված կ'ըլլայ. և այս ալ Քրիստոսի մկրտութիւնն է, ինչպէս որ Քրիստոս ինքը ըսաւ Օրբեդեոսին որդւոյը. "Կարէ՞ք ըմպել զբաժակն զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ մկրտիլ" (Մատթ. ի. 22)։ Աստանկներն ալ փրկութեան կը հասնին։

Երախայ մը վտանգի մէջ ըլլայ, և ծնողքը անիկայ մկրտութեան հասցընելու փափաք ունենան, բայց չի կրնան հասցընել, այն երախայն իր ծնողացը փափաքովը մկրտված չի սեպվիր. քանզի այս փրկարար ջուրը չի մտած՝ սկզբնական մեղքէ չի կրնար ազատվիլ։ Եւ թէ որ այս ծնողաց փափաքը տղայոց օգուտ ընելու ըլլար նէ՝ ծնողաց հաւատքն ալ նմանապէս տղայոց օգուտ ը-

նելու էր. բայց բնաւ ասանկ օգուտ մը ընելիք չունի։

Ասոնք մկրտութեան միջնորդութեամբ Աստուածային շնորհքներն են։

Բայց եռքը մկրտվողին պարտականութիւնները շատ են. մկրտութեան ատենը խօսք տուած բաները կատարելու է. սատանայէն ու անոր խաբէութենէն ու պատրանքներէն ու խորհուրդներէն ու գնացքներէն ու չար կամքերէն հրաժարելու է։ Աստուծոյ և անոր Հոգւովը կառավարված և առաջնորդված սուրբ եկեղեցիին պատուիրանքներէն և խոստովանութենէն ապստամբեցրնող և հեռացրնող սատանային չար հրեշտակներէն և չար պաշտօնեայներէն, և սատանային կամքը կատարող չարերէն հեռանալու է։

Բայց Քրիստոս ինքը ըսաւ որ՝ առանց ինձի բան չէք կրնար ընել. բարեգործութեան պտուղ բերելը միայն իմ վրաս հաստատվելով կ'ըլլայ. "Ես, հաստատեալ է „յիս՝ և ես 'ի նա, նա բերէ պտուղ յոյժ. „զի առանց իմ ոչ ինչ կարէք առնել „ (Յովհ. ԺԵ. 5)։ Իւ Քրիստոսի հաստատվելը՝ Քրիստոսի մարմին ըլլալով կ'ըլլայ. և Քրիստոսի մարմին ըլլալը՝ Քրիստոսի եկեղեցւոյն անդամ ըլլալով կ'ըլլայ, որուն գլուխը Քրիստոս է (Եփես. Ե. 23). Բանզի անիկայ աւազանին սրբութեամբը բանիւ կը սրբէ (Ես. 26). Իւ անով կ'ըլ-

լամք անոր մարմնոյն անդամքները, և որ-
պէս թէ անոր ոսկորներուն կրտորվանքը։
"Ընդամք եմք մարմնոյ նորա, 'ի մարմնոյ
„նորա և յոսկերաց նորա „ (Ընդ. 30)։
Ընանկ է նէ՝ հոգիներնուս փրկութեան օգ-
տակար կերպով բարեգործութիւն ընելը՝
մկրտութեան խորհրդոյն մէկ արդիւնքն է.
քանզի մեր գործքը առանց Քրիստոսի ար-
դեանցը հետ միանալու ոչինչ են. և մին-
չեւ որ մկրտութեամբ մենք Քրիստոսի հետ
չի միանամք նէ՝ մեր բարի գործքերն ալ
Քրիստոսի գործոցը հետ չեն միանար։ Ա-
սոր համար Պօղոս առաքեալ մեզի խրատ
կուտայ ըսելով. "Մատիցուք ճշմարիտ սրը-
„տիւ լրութեամբ հաւատոց, լուացեալ
„զսիրտս 'ի խղճէ չարեաց, և մկրտեալ ըզ-
„մարմինն 'ի ջուրն սրբութեան։ Պինդ կալ-
„ցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն.
„զի հաւատարիմ է որ խոստացաւն։ Յու-
„զուշացուք միմեանց յորդորմամբք սի-
„րոյ և գործոց բարեաց „ (Եբր. ժ.
21=24)։

Ահա այս է ճշմարիտ թլփատութիւնը՝
որուն առաքեալը կ'ըսէ անձեռագործ թլը-
փատութիւն. "Որով թլփատեցարուք հա-
„ւատովք զանձեռագործ թլփատութիւնն.
„'ի մերկանալ զանդամս մարմնոյ թլփատու-
„թեամբն Քրիստոսի։ Թաղեալք ընդ նմին
„'ի մկրտութեանն „ (Կոլոս. բ. 11. 12)։
Մովսէս մարգարէն ալ ասիկայ կը պատուի-

ըէր Իսրայէլացւոց. “Թլփատեցէք զխստա-
„սրտութիւն ձեր „ (բ. Օրինաց. ժ. 16)։
Բայց ասիկայ օրէնքը չէր կրնար ընել. ա-
նոր համար Քրիստոս աշխարհք եկաւ, և
ինչպէս որ առաքեալը կ'ըսէ՝ “Դատապար-
„տեաց զմեզս 'ի մարմնի անդ. զի արդա-
„րութիւն օրինացն կատարեսցի 'ի մեզ „
(Հռոմ. ը. 3. 4)։

Այս տեղս ներեն ինձի ընթերցողները,
որ մէկ խորհրդածութիւն մըն ալ եվելցը-
նեմ։ Հին օրէնքը արդարութիւն կը պատ-
ուիրէր, բայց չէր կրնար ընել տալ. քանզի
սկզբնական մեղքը վերցընելու մէկ խոր-
հուրդ մը չունէր. և այս խստասրտութի-
ւնը որուն համար Մովսէս կը պատուիրէ թէ
թլփատեցէք, կտրեցէք նետեցէք, սկզբնա-
կան մեղաց պտուղ և օրինակն էր։ Այսոր
վրայ Որոգինէս՝ որ եկեղեցւոյ հին վարդա-
պետաց մէկն է, շատ աղէկ խորհրդածու-
թիւն ըրած է. (Մէկն. Երեմիայ. ճառ, ե.
ԺԲ. 14)։ “Թլփատելու բանը կ'ըսէ՝ մար-
„դոյս հետ ծնած բան մը պիտի ըլլայ. և
„Թլփատելը՝ անիկայ կտրելն է։ Ծնած ա-
„տենէն մարդուն հետը եղած բանը թըլ-
„փատութիւնը կը կտրէ կը նետէ։ Ուրեմն
„այս խօսքս որ կը պատուիրէ խստասրտու-
„թիւնը թլփատել, պէտք է անանկ ցրցու-
„ցած ըլլայ՝ որպէս թէ խստասրտութիւնը
„սրտերնուս հետ կը ծնի, որուն սրտի ան-
„թըլփատութիւն կ'ըսվի, և կտրել նետել

„կը հրամայէ։ Թէ որ մէկը խորհի առաքե-
„լոյն ըսածը, “ Լաւ արդարև որդիք բար-
„կութեան „ (Եբրայ. բ. 3). կը տեսնէ որ
„ինչպէս անմաքրութեամբ և սրտի անթըլ-
„փատութեամբ ծնած էմք „։

Այս կողմէն մկրտութեան համար կրը-
նամք ըսել թէ թլփատութեան ճշմարիտ
էութիւնն է. և թլփատութիւնը ասոր ըստ-
ուերն ու օրինակն է. բայց իրարմէ շատ
հեռու են գործոյ և պատուականութեան
կողմանէ։ Թլփատութիւնը միայն օրինակաւ
անթլփատութիւնը կը կտրէր. բուն սրտի
անթլփատութիւնը կտրել կը պատուիրէր,
բայց ինքը չէր կտրեր։ Մկրտութիւնը գա-
լէն ետքը՝ օրինակը խափանեցաւ. և այս
խորհրդոյս զօրութիւնը հաղորդեց Քրիս-
տոս, որով սկզբնական մեղքը կը ջնջէ. և
ով որ հաւատայ նէ՝ որդի բարկութեան ըլ-
լալէն կը՝դադարի, և մկրտութեամբ որդի
Աստուծոյ կ՚ըլլայ։

Տեսրակիս մէջ մկրտութեան համար
գրվածները հին հայրապետաց խօսքով ալ
հաստատել պէտք էր. որպէս զի չի կարծը-
վի որ այս դաւանութիւնս նոր բան մըն է։
Ասոր համար մենք միայն սուրբ Կիպրիա-
նոս հայրապետին իրեն Դոնատոս անուն
բարեկամին գրած խօսքը առինք։ Մէկ մը
որ՝ մկրտութեան զօրութիւնը շատ աղէկ

կրստորագրէ։ Երկրորդ՝ այս զօրութիւնը իր վրան փորձած ըլլալը կը պատմէ։ Երրորդ՝ աւանդութենէ սորված ըլլալը յայտնի կ'ընէ. որովհետեւ նոր քրիստոնեայ եղած ատենը գրած է, երբ որ սուրբ գրոց վրայ շատ տեղեկութիւն ստանալու չափ չէր կարդացեր. և ասոր նշանն ալ այն է որ՝ այս սուրբ հայրապետը՝ որուն գրած բոլոր ճառերը և նամակները գրեթէ սուրբ գրոց խօսքով հիւսված են. այս նամակիս մէջ սուրբ գիրքէն առած վկայութիւն չունի։ Եւ ասով կը հասկընամք որ իր ժամանակը. այսինքն՝ Քրիստոսի 245 թուին, (որ է սուրբ Կիպրիանոսի մկրտութեան տարին), բոլոր քրիստոնեայք կամ քրիստոնէական եկեղեցին այս հաւատքիս վրայ էին։ Սուրբ Կիպրիանոսին խօսքն է այս։

"Կ'ուզի՞ր այն՝ որ մարդ չի սորված փորձը կ'ընէ. ծանօթութեց երկար ճամբուն վրայէն չի ժողովուիր. շուտով հասունցընող հնարքին աւելի համառօտ ճամբովը կը գտնուի։ Երբոր մութ գիշերվան մէջ մնացած ըլլալով կողբայի, և աշխարհիս մերերը կալից ծուլուն վրայ ես զիս շիտակելու պարապ տեղը կը հոգնէի, չէի գիտեր որ կենացս վերջը ո՞ւր կը նայի. ամէն ճշմարտութենէ և լուսաւորութենէ հեռու մնացած էի, այն ատենը իմ ընտելացած սովորութիւններուս մէջ շատ կարծր և աշխատանքով լեցուն կը գտնէի այն բանը՝

„որ Աստուածային գթութիւնը ինձի կը
„հրամայէր իմ փրկութեանս համար։ Պէտք
„էր նորէն ծնանիլ. փրկարար աւազանին
„մէջ նոր կեանքէ մը հոգեւորիլ. հինը մէկ
„դի ձգել. և իւր մարմինը վրան պահելով
„մարդկային միտքն ու սիրտը փոխել։ Այս
„ինձի կ՚ըսէի. այս փոփոխութիւնս ի՞նչպէս
„կրնայ ըլլալ։ Ի՞նչպէս մարդ ծնած ատե-
„նէն վաստակածը, որուն մէջ նիւթոյն ան-
„շարժութեանը համար կարծրացեր մնա-
„ցեր է, մէկէն 'ի մէկ կրնայ իր վրայէն նե-
„տել. որ տարիներ անցնելով անոր կապվեր,
„և կամաց կամաց որպէս թէ հետը փակեր
„է։ Շատ անգամ այս բաներուս վրայ կը
„մտածէի։ Քանզի շատ մը մոլորութիւննե-
„րու մէջ ես զիս կապված կը գտնէի, որ
„տղայութեան ժամանակէն մոքիս մէջ տի-
„րող մոլորութիւններէն մնացած էին. և ա-
„նոնցմէ զատվիլլս ինձի անհնար կ՚երեւէր։
„Լաստի ես զիս՝ ինձի փակած մոլորութիւն-
„ներուն և գէշութիւններուն բոլորովին
„յանձնել կը խորհէի. և բնաւ շիտկվե-
„լուս յոյս մը չունենալով՝ այն գէշութիւն-
„ներուն հետ հանդարտ կը կենայի. որպէս
„թէ անոնք միշտ իմ ներսը բնակելու ի-
„րաւունք ունեցածի պէս բռնելով։ Այց
„երբ որ իմ առաջին մեղքերուս աղտը վե-
„րըստին ծննդեան ջրովը մաքրըվեցաւ,
„շուտ մը մէկ մաքուր և պայծառ լոյս մը
„երկինքէն մեղքէ ազատված սրտիս վրայ

„ծառայեցաւ։ Եւ երկնային Հոգին առ-
„նելէս՝ և վերստին ծննդեամբ նոր մարդ
„ըլլալէս անմիջապէս եռքը՝ իմ տարտամ
„մտքիս օգնելու զարմանալի զօրութիւն մը
„եկաւ։ Մինչեւ հիմա ինձի համար գոց
„մնացած տեղեկութիւնները բացվեցան.
„խաւարը փարատեցաւ. առաջկուց ինձի
„դժուարին երեւցած բաները ընելու չափ
„զօրութիւն ստացայ. անհնար կարծած բա-
„ները հնարաւոր դատայ. և հասկըցայ որ՝
„ըստ մարմնոյ ծնած ըլլալով մեզաց ծառա-
„յութեան մէջ ապրող մարդը երկրային է.
„Հոգւոյն սրբոյ հոգեւորած մարդը կ'ըլ-
„լայ Աստուածային»։

Մկրտութեան վրայ խօսած բաներնիս
ամէնն ալ սուրբ Կիպրիանոսի այս խօսքին
մէջը կը գտնես, թէ որ մտադրութեամբ
կարդաս։ Թէ՛ այս սուրբ Հայրապետէս ա-
ռաջ և թէ՛ եռքը եկող Հայրապետներն ալ՝
իրենց ժամանակի Եկեղեցւոյն դաւանու-
թեանը համար նոյն վկայութիւնը կուտան։

ՎԵՐՋ։

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ZMR. SSR
Ս. ԵՂԻՇԵԱՆԻ ԱՆՎԱՆ

1. 50.

ՑԱՆԿ

Յառաջաբանութիւն. 4
ԳԼ. Ա. Մկրտութիւնը ի՞նչ է, և պզտիկ տղոց ալ հարկաւո՞ր է մի. և ինչո՞ւ համար։ 1
1 Մկրտութիւնը ի՞նչ է։ անդ
2 Մկրտութիւնը պզտիկ տղոց հարկաւո՞ր է մի։ 4
3 Ինչո՞ւ համար հարկաւոր է։ 7
ԳԼ. Բ. Մկրտութիւնը հարկաւոր չի սեպողները ովքեր են։ 13
1 Մանիքեցիները։ անդ
2 Պօղիկեանները։ 15
3 Թոնդրակեցիները։ 17
4 Ալպեցիք կամ Աղբիգեանները, որ Կաթարոս և Աւետարանական ալ կ'ըսվին։ 18
5 Պետրոս Պրիւի։ 19
6 Մելանքթան։ 20
7 Զուինգլի։ 20
8 Անկլիքանները։ 23
9 Կալվին։ 23
10 Պէզա։ 24
11 Կալվինականները։ 25
12 Կալվինականները իրենց այս վարդապետութիւնը ժողովքով կը հաստատեն։ 26
13 Աւէպարանական Խարոսլիանի տեսարակին խօսքերուն քննութիւն։ 26
ԳԼ. Գ. Մկրտութիւնը թլփատութեան տեղը տրված չէ։ 37
Մկրտութեան զօրութեանը վերայ տուրբ Կիպրիանոս հայրապետէն վկայութիւն։ 60